ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Արձանագրային որոշում

28/02/2000 թիվ 10

«Վճարային հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ձեռնարկի նախագծին հավանություն տալու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» և 2-րդ կետի «զ» ենթակետերը, ղեկավարվելով նույն օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Վճարային հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ձեռնարկի նախագծին:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի աշխատակազմի արձանագրային բաժնին՝ վերոհիշյալ ձեռնարկն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործերի կառավարչությանը՝ երկամսյա ժամկետում ապահովել նշված ձեռնարկի հրատարակումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագրի» հատուկ թողարկմամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ջ Ե Ռ Ն Ա Ր Կ

Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը 5
Վճարման հանձնարարականը 6
Միջոցների փոխանցման գործարքի մասնակիցները 8
Միջոցների փոխանցման համակարգերը 13
Հաճախորդին պայմանագրի էական պայմանները
բացատրելու պարտավորությունը 14
Գործառնական օրը: Վճարման հանձնարարականի ստացման պահը 14

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ,
ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼԸ 15
Անվտանգության արարողակարգը 15
Վճարման հանձնարարականի վավերությունը 16
Վճարման հանձնարարականի անվավերության հետևանքները 18
Սխալը վճարման հանձնարարականում 19
Վճարման հանձնարարականի ուղարկումը միջոցների փոխանցումների
կամ հաղորդակցման այլ համակարգի միջոցով 20
Շահառուի նույնացումը 20
Միջնորդ բանկի և շահառուի բանկի նույնացումը 23
Վճարման հանձնարարականն ակցեպտավորելը 26
Վճարման հանձնարարականը մերժելը 30
Վճարման հանձնարարականը չեղյալ համարելը: Չեղյալ
համարելու հանձնարարականն ակցեպտավորելը 32
Վճարման հանձնարարականն ակցեպտավորելու
ստացող բանկի պարտավորությունը 34

ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՈՂԻ ՎՃԱՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ 35
Վճարման հանձնարարականի կատարումը և կատարման օրը 35
Ստացող բանկի պարտավորությունները վճարման
հանձնարարականը կատարելիս 37
Վճարման հանձնարարականի սխալ կատարումը 39
Վճարման հանձնարարականի սխալ կատարման մասին
ուղարկողի հայտնելու պարտավորությունը 41
Պատասխանատվությունը վճարման հանձնարարականը
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար 41

ՎՃԱՐՈՒՄԸ 42
Վճարման հանձնարարականի վճարման օրը 42
Ստացող բանկին վճարելու ուղարկողի պարտավորությունը 43
Ուղարկողի վճարումն ստացող բանկին 45
Շահառուին վճարելու և տեղեկացնելու
շահառուի բանկի պարտավորությունը 46

Շահառուի բանկի վճարումը շահառուին ……..…….. 48
Վճարողի վճարումը շահառուին: Հիմնական
պարտավորության կատարումը ……... 49
Միջոցների փոխանցման համակարգի կանոնները և պայմանագրերը …….. 51
Շահառուի բանկի հաշվակցելու իրավունքը …….…….. 51
Ստացող բանկին ներկայացված կալանքի կամ արգելանքի մասին
որոշումները: Միջոցների փոխանցումն արգելող
դատարանի որոշումները ……..…….. 52

Հաշիվը: Հաշվի մնացորդը: Վճարման հանձնարարականների
կատարման հերթականությունը ……..……. 52
Տոկոսների չափը և դրանց հաշվարկման կարգը …….…….. 53
Հայաստանի Հանրապետության բանկերի և օտարերկրյա
բանկերի միջև միջոցների փոխանցումների
իրավական կարգավորումը …….……. 54
Վճարման առավելագույն ժամկետներ …….. 56

Ներածություն

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» սույն ձեռնարկը մանրամասնորեն նկարագրում է վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների գործարքի մասնակիցների իրավունքները, պարտականությունները, վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների իրականացման համար անհրաժեշտ կանոնները, դրանց ժամանակ առաջացող անսպասելի իրավիճակներում մասնակիցների վարվելագիծը (վարքագիծը) և պատասխանատվությունը: Այն հարուստ է բազմաթիվ օրինակներով և որպես մեթոդական նյութ մեծ օգնություն կարող է ցուցաբերել վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցման գործարքի մասնակիցներին:

Ձեռնարկում հղումներ են կատարվում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքին, որն ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 9-ից, և որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում ամենալայն կիրառում ունեցող անկանխիկ վճարման ձևերից մեկը՝ վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը: Մինչև «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի ընդունումը չի եղել որևէ սպառիչ կանոնակարգիչ ակտ, որով սահմանվեին «վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման իրավական ռեժիմը», «միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար»: Գոյություն ունեցող միակ նորմատիվ բնույթի ենթաօրենսդրական ակտը 1979 թվականի մայիսի 31-ի ԽՍՀՄ պետբանկի «Ժողովրդական տնտեսությունում անկանխիկ հաշվարկների մասին» թիվ 2 հրահանգն էր: Հիշյալ հրահանգի գլուխ IV-ը վերաբերում էր վճարման հանձնարարականներով հաշվարկներին: Սակայն հրահանգը կարգավորում էր պլանային տնտեսությունում և միասնական պետական բանկային համակարգի պայմաններում ծագող իրավահարաբերությունները: «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքը վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասնակիցների միջև փոխանցումների կապակցությամբ ծագող հարաբերությունների առավել հստակ և մանրամասն կարգավորման անհրաժեշտության արդյունք է:

Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը

Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը դասվում է կրեդիտային փոխանցումների շարքին, քանի որ փոխանցումն իրականացվում է վճարման կրեդիտային գործիքի՝ վճարման հանձնարարականի միջոցով: Ի տարբերություն միջոցների դեբետային փոխանցումների, որտեղ փոխանցման նախաձեռնող է համարվում միջոցների վերջնական ստացողը (հասցեատերը)՝ «շահառուն» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 7), կրեդիտային փոխանցումների նախաձեռնողը վճարողն է, և միջոցների փոխանցման սկիզբ է համարվում նրա կողմից վճարման հանձնարարականի ներկայացումը իրեն սպասարկող բանկին: Միջոցների փոխանցումը ներառում է «վճարողի բանկի», «միջնորդ բանկի» (միջոցների փոխանցման մեջ ներառված լինելու դեպքում), «շահառուի բանկի» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետեր 4, 5, 8) բոլոր այն հաջորդական գործողությունները, որոնք կատարվում են վճարողի կողմից բանկ ներկայացված վճարման հանձնարարականում սահմանված շահառուին «նախատեսված գումարը վճարելու նպատակով»: Միջոցների փոխանցման ամբողջական գործարքը կարող է բաղկացած լինել մի շարք վճարման հանձնարարականներից, որոնք կարող են ուղարկվել վճարողի բանկի և միջնորդ

բանկի/բանկերի կողմից «վճարողի վճարման հանձնարարականը կատարելու նպատակով»: Միջոցների փոխանցումն ավարտվում է շահառուի բանկի կողմից միջոցների փոխանցման նախաձեռնողի (վճարողի) վճարման հանձնարարականում նշված շահառուի օգտին վճարման հանձնարարականի ակցեպտավորմամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2):

Վճարման հանձնարարականը

Վճարման հանձնարարականը վճարային գործիք է, որն իրենից ներկայացնում է «ուղարկողի» (վճարող, վճարողի բանկ կամ միջնորդ բանկ) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 3) հանձնարարականն «ստացող բանկին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 6) «բանավոր»՝ անմիջականորեն կամ հեռախոսի միջոցով, «գրավոր»՝ թղթային եղանակով կամ «էլեկտրոնային եղանակով»՝ էլեկտրոնային վճարումների համակարգի կամ այլ նմանատիպ համակարգերի միջոցով կատարելու որոշակի գործողություններ: Կոնկրետ դեպքերից ելնելով՝ բանկին կարող է հանձնարարվել կատարելու հետևյալ գործողությունները.

1. «վճարել շահառուին»՝ այն դեպքում, երբ վճարողը և շահառուն սպասարկվում են միևնույն բանկում/բանկի մասնաճյուղում կամ
2. «հանձնարարել այլ բանկի՝ վճարելու շահառուին», այն դեպքում, երբ վճարողը և շահառուն սպասարկվում են տարբեր բանկերում/բանկի տարբեր մասնաճյուղերում:

Վճարողը բանկ ներկայացրած իր վճարման հանձնարարականում կարող է սահմանել (ֆիքսել) շահառուին վճարվելիք գումարը («հաստատագրված գումար»), կամ այն կարող է հաշվարկել բանկը («հաշվարկվող գումար») վճարողի կողմից տրված հանձնարարության հիման վրա:

Որպեսզի վճարողի հանձնարարությունը համարվի վճարման հանձնարարական, այն.

1. չպետք է սահմանի «վճարման ժամկետից բացի» («կատարման օր» «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, «վճարման օր»՝ հոդված 24) «շահառուին վճարելու այլ պայման» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 1 ենթակետ ա) (ի տարբերություն այլ գործիքների, օրինակ՝ ակրեդիտիվ, փաստաթղթային փոխանցում և այլն, որտեղ սահմանվում է պայման՝ շահառուին վճարելու միայն վերջինիս կողմից շահառուի բանկին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում), և
2. վճարման հանձնարարականի «ստացող բանկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 6) «հատուցում է ստանում» հանձնարարականն ուղարկողից՝ դեբետագրելով իր մոտ վարվող ուղարկողի հաշիվը (ընթացիկ, «լորո») «կամ այլ ձևով», օրինակ, ուղարկողի՝ ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ կանխիկ գումարն ստանալով կամ ուղարկողի՝ բանկ լինելու դեպքում՝ ուղարկողի կողմից իր մոտ վարվող ստացող բանկի «նոստրո» հաշիվը կրեդիտագրելով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 1, ենթակետ բ), և

3. հանձնարարությունն ուղարկողի կողմից բանկին տրվում է անմիջականորեն կամ «միջնորդավորված եղանակով՝ գործակալի, միջոցների փոխանցման կամ հեռահաղորդակցման համակարգի միջոցով» (էլեկտրոնային վճարումների համակարգ, S.W.I.F.T., հեռախոս, ֆաքս, հեռատիպ և այլն) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 1, ենթակետ գ):

Եթե ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականը «նախատեսում է մեկից ավելի վճարում» իրականացնել շահառուին (պարբերական վճարումների հանձնարարական և այլն), «ապա այն առանձին վճարման հանձնարարական է յուրաքանչյուր վճարման համար»:


Օրինակ 1. X-ը, որն ունի հաշիվ բանկ A-ում, հանձնարարում է A (իր) բանկին՝ վճարելու 6.500 դրամ Y-ին, ընդ որում.

13.12.1999 թ. - 500 դրամ,
17.12.1999 թ. - 1.000 դրամ,
23.12.1999 թ. - 5.000 դրամ:


Սույն հանձնարարականը պետք է դիտարկվի բանկի կողմից որպես X-ի կողմից իրեն տրված երեք առանձին վճարման հանձնարարականներ, և նշված (տվյալ դեպքում՝ երեք) վճարումներից յուրաքանչյուրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում բանկը պատասխանատվություն է կրում միայն չկատարված կամ ոչ պատշաճ կատարված հանձնարարականի մասով:

Նույնը վերաբերում է այն դեպքերին, երբ ուղարկողն ստացող բանկին վճարման հանձնարարական է տալիս իրականացնելու վճարումներ մի քանի շահառուների (նկարներ 1, 2).

Նկար 1



Նկար 2




Ի կատարումն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի կետ 3-ի՝ «վճարահաշվարկային համակարգի գործունեության սահունությունն ապահովելու» նպատակով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1999 թ. հունվարի 9-ի թիվ 9 որոշման համաձայն՝ սահմանվել են «վճարման հանձնարարականների, դրանք չեղյալ համարելու հանձնարարականների և տեղեկացումների վավերապայմանները»:

Միջոցների փոխանցման գործարքի մասնակիցները

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում տրված են միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների (կողմերի) սահմանումները: Դրանք ամբողջովին հասկանալու համար դիտարկենք կոնկրետ օրինակներ.


Օրինակ 1. X-ը, որն ունի հաշիվ բանկ A-ում, հանձնարարում է A (իր) բանկին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, գումարը հաշվեգրելով Y-ի նույն բանկում գտնվող հաշվին: Բանկ A-ն դեբետագրում է X-ի հաշիվը և կրեդիտագրում Y-ի հաշիվը, որից հետո տեղեկացնում է Y-ին ստացված գումարի վերաբերյալ:



Այս օրինակում X-ի կողմից բանկ A-ին տրված հանձնարարությունը «վճարման հանձնարարական» է («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3), X-ը՝ վճարման հանձնարարականի «ուղարկողը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 2), բանկ A-ն՝ վճարման հանձնարարականի «ստացող բանկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 6), Y-ը՝ վճարման հանձնարարականի «շահառուն» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 7): Այս օրինակում բանկ A-ն հանդես է գալիս նաև որպես «շահառուի բանկ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 8): Այն ժամանակ, երբ բանկ A-ն տեղեկացնում է Y-ին, նա «ակցեպտավորում է» վճարման հանձնարարականը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2): Ակցեպտավորելով վճարման հանձնարարականը՝ բանկ A-ն պարտավորություն է վերցնում վճարելու վճարման հանձնարարականում նշված գումարը Y-ին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետեր 1, 2): Երբ բանկ A-ն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը, X-ը պարտավորություն է ստանձնում վճարելու բանկ A-ին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 1): Երբ բանկ A-ն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը, X-ի վճարումը Y-ին համարվում է կատարված («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 1): A բանկի կողմից ստանձնված՝

շահառուին վճարելու պարտավորությունը կատարված է համարվում, երբ նա տեղեկացրել է շահառուին վերջինիս անունով ստացված և ազատ տնօրինման ենթակա գումարների վերաբերյալ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 1, ենթակետ ա): X-ի կողմից A բանկին վճարման հանձնարարականի ներկայացմամբ սկսված, մինչև A բանկի կողմից շահառուին տեղեկացումը, ներառյալ բոլոր գործողությունների համակցությունը, իրենից ներկայացնում է «վճարման հանձնարարականով միջոցների փոխանցում» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2): Այս օրինակի դեպքում միայն մեկ վճարման հանձնարարական է ներգրավված միջոցների փոխանցման մեջ: Օրինակում նկարագրված դեպքը միջազգային բանկային պրակտիկայում անվանում են «գրքերում գրանցմամբ փոխանցում» («book transfer»), քանի որ վճարումն իրականացվում է ստացող բանկի կողմից ուղարկողի հաշվի դեբետագրմամբ և շահառուի՝ նույն բանկում վարվող հաշվի կրեդիտագրմամբ: X-ը, լինելով A բանկին վճարման հանձնարարական ուղարկող, միևնույն ժամանակ, միջոցների փոխանցման «նախաձեռնողն է» և գումարի «վճարողը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 3): A բանկը միջոցների փոխանցման տեսանկյունից և' «նախաձեռնողի բանկն է» կամ «վճարողի բանկը», («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 4) և' «շահառուի բանկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 8):


Օրինակ 2. X-ը, որն ունի հաշիվ A բանկում, հանձնարարում է A բանկին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, որի հաշիվը գտնվում է B բանկում: A բանկը և B բանկն ունեն թղթակցային հարաբերություններ:



A բանկին տրված վճարման հանձնարարականի տեսանկյունից X-ը «ուղարկող է», A բանկը՝ «ստացողի բանկ», իսկ Y-ը՝ «շահառու»: Ի կատարումն X-ի կողմից տրված վճարման հանձնարարականի՝ A բանկը հանձնարարություն է տալիս B բանկին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, գումարը հաշվեգրելով իր մոտ վարվող վերջինիս հաշվին: Այս հանձնարարությունը «վճարման հանձնարարական է», որի տեսանկյունից A բանկը վճարման հանձնարարականի «ուղարկողն է», B բանկը՝ վճարման հանձնարարականը «ստացող բանկը», Y-ը՝ «շահառուն»: Երբ A բանկը վճարման հանձնարարական է

ուղարկում B բանկին, A բանկը «կատարում է» X-ի կողմից տրված հանձնարարությունը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, կետ 1): Միջոցների փոխանցման տեսանկյունից X-ը միջոցների փոխանցման «նախաձեռնողն է» կամ «վճարողը», A բանկը՝ «նախաձեռնողի բանկն է» կամ «վճարողի բանկը», B բանկը՝ «շահառուի բանկը»: Երբ բանկ A-ն կատարել է X-ի կողմից տրված հանձնարարությունը, X-ը պարտավորություն է ստանձնում վճարել բանկ A-ին վճարման հանձնարարականում նշված գումարը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 2): Երբ բանկ B-ն ակցեպտավորում է բանկ A-ի կողմից տրված վճարման հանձնարարականը, բանկ B-ն պարտավորություն է ստանձնում վճարելու Y-ին բանկ A-ի կողմից տրված վճարման հանձնարարականում նշված գումարը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 27), իսկ բանկ A-ն իր հերթին պարտավորություն է ստանձնում վճարելու բանկ B-ին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 1): Երբ բանկ B-ն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը, X-ի վճարումը Y-ին համարվում է կատարված («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 1): Այս օրինակում երկու վճարման հանձնարարական է ներգրավված միջոցների փոխանցման համար:


Օրինակ 3. X-ը, որն ունի հաշիվ A բանկում, հանձնարարում է A (իր) բանկին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, գումարը հաշվեգրելով Y-ի հաշվին, որը գտնվում է բանկ B-ում: Բանկ A-ն և բանկ B-ն միմյանց հետ չունեն թղթակցային հարաբերություններ, սակայն յուրաքանչյուրն ունի թղթակցային հարաբերություններ C բանկի հետ:



Եթե բանկ A-ն և բանկ B-ն միմյանց հետ չունեն թղթակցային հարաբերություններ, ապա միջոցների փոխանցման նորմալ իրականացման համար անհրաժեշտ կողմ (բանկ) է ներգրավվում, որն ունի թղթակցային հարաբերություններ երկու բանկի հետ: Ի


կատարումն X-ի կողմից տրված վճարման հանձնարարականի՝ բանկ A-ն հանձնարարություն է տալիս բանկ C-ին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, հաշվեգրելով գումարը բանկ B-ում գտնվող Y-ի հաշվին: Այդ հանձնարարությունը նույնպես վճարման հանձնարարական է, որի տեսանկյունից բանկ A-ն վճարման հանձնարարականի «ուղարկողն է», բանկ C-ն՝ վճարման հանձնարարականի «ստացող բանկը» և Y-ը՝ «շահառուն»: Ի կատարումն բանկ A-ի կողմից տրված վճարման հանձնարարականի՝ բանկ C-ն հանձնարարություն է տալիս բանկ B-ին՝ վճարելու 1.000.000 դրամ Y-ին, գումարը հաշվեգրելով բանկ B-ում վարվող Y-ի հաշվին: Այդ հանձնարարությունը նույնպես վճարման հանձնարարական է, որի տեսանկյունից բանկ C-ն վճարման հանձնարարականի «ուղարկողն է», բանկ B-ն՝ վճարման հանձնարարականի «ստացող բանկը» և Y-ը՝ «շահառուն»: X-ի կողմից Y-ին նախատեսված վճարումը կատարվում է, երբ բանկ B-ն ակցեպտավորում է բանկ C-ի կողմից ուղարկված վճարման հանձնարարականը: Այս օրինակի դեպքում միջոցների փոխանցման մեջ ներգրավված են երեք վճարման հանձնարարականներ: Միջոցների փոխանցման տեսանկյունից X-ը միջոցների փոխանցման «նախաձեռնողն է» կամ «վճարողը», բանկ A-ն՝ «նախաձեռնողի բանկն է» կամ «վճարողի բանկը», բանկ B-ն՝ «շահառուի բանկն է», իսկ բանկ C-ն՝ «միջնորդ բանկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 5): Որոշ դեպքերում միջոցների փոխանցման համար կարող են ներգրավվել մեկից ավելի միջնորդ բանկեր:

Օրինակ 4. X-ը, որն ունի հաշիվ բանկ A-ում, հանձնարարում է բանկին՝ փոխանցելու 1.000.000 դրամ իր մյուս հաշվին, որը գտնվում է նույն բանկում:




Այս օրինակը նման է օրինակ 1-ին, սակայն այս դեպքում X-ը և՛ վճարման հանձնարարականի «ուղարկողն է», և՛ միաժամանակ «շահառուն», բանկ A-ն՝ վճարման հանձնարարականի «ստացող բանկն է»: Միջոցների փոխանցման տեսանկյունից X-ը միջոցների փոխանցման «նախաձեռնողն է» կամ «վճարողը», բանկ A-ն՝ «նախաձեռնողի բանկն է» կամ «վճարողի բանկը», որը միաժամանակ հանդես է գալիս որպես «շահառուի բանկ»:

Օրինակ 5. X-ը, որն ունի հաշիվ բանկ A-ում, հանձնարարում է A (իր) բանկին՝ փոխանցելու 1.000.000 դրամ իր մյուս հաշվին, որը գտնվում է բանկ B-ում: Բանկ A-ն և բանկ B-ն ունեն թղթակցային հարաբերություններ:



Այս օրինակը նման է օրինակ 2-ին, սակայն այս դեպքում X-ը իր կողմից բանկ A-ին ներկայացված վճարման հանձնարարականի «ուղարկող» լինելով՝ միաժամանակ «շահառուն է»:

Օրինակ 6. X-ը, որն ունի հաշիվ բանկ A-ում, հանձնարարում է A (իր) բանկին՝ փոխանցելու 1.000.000 դրամ իր մյուս հաշվին, որը գտնվում է բանկ B-ում: Բանկ A-ն և բանկ B-ն միմյանց հետ չունեն թղթակցային հարաբերություններ, սակայն յուրաքանչյուրն ունի թղթակցային հարաբերություններ բանկ C-ի հետ:



Այս օրինակը նման է օրինակ 3-ին, սակայն այս դեպքում X-ը իր կողմից բանկ A-ին ներկայացված վճարման հանձնարարականի «ուղարկող» լինելով՝ միաժամանակ «շահառուն է»:

Նկարագրված օրինակներում բանկ A-ն կատարում է իր՝ ոչ բանկ հաճախորդի հանձնարարությունները, սակայն հաճախ բանկը չի գործում հաճախորդի համար, այլ կատարում է սեփական վճարումները: Այդ դեպքերում միջոցների փոխանցման տեսանկյունից բանկ A-ն կհամարվի որպես միջոցների փոխանցման և' «նախաձեռնող» կամ «վճարող», և' «նախաձեռնողի բանկ» կամ «վճարողի բանկ»: Վճարման հանձնարարականի տեսանկյունից այս դեպքերում բանկ A-ն «ուղարկողն է»:

Վճարողի կողմից վճարման հանձնարարականով կարող է հանձնարարվել շահառուի բանկին՝ վճարելու վճարման հանձնարարականում սահմանված գումարը շահառուին՝ ա) կրեդիտագրելով նրա հաշիվը բանկում (անկանխիկ եղանակ) կամ բ) այն կանխիկ տրամադրելով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 8):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից բանկը, բանկի մասնաճյուղը, գործառնական գրասենյակը (կետը) դիտարկվում են որպես «միջոցների փոխանցման ինքնուրույն մասնակիցներ», որոնց վրա տարածվում են օրենքից բխող և «բանկերի համար սահմանված միջոցների փոխանցման կապակցությամբ ծագող իրավունքներն ու պարտավորությունները» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 9):

Միջոցների փոխանցման համակարգերը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածում տրված է «միջոցների փոխանցման համակարգերի» սահմանումը՝ որպես «ՀՀ կենտրոնական բանկի, բանկի կամ բանկերի հաղորդակցման մասնագիտացված համակարգեր»: Այն ներառում է այնպիսի համակարգեր, որոնք ապահովում են «վճարման հանձնարարականների, դրանք չեղյալ համարելու հանձնարարականների և հաշիվների մասին տեղեկացումների (քաղվածքների) փոխանցումը դրանցում հասցեագրված անձանց», ինչպես նաև հաշվարկների իրականացումը, ինչպիսին է, օրինակ, ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգը: Այդպիսի համակարգեր կարող են համարվել, առկայության դեպքում, նաև ավտոմատացված քլիրինգային համակարգերը, որոնց միջոցով իրականացվում է վճարման հանձնարարականների մշակումը և փոխանցումը համակարգի մասնակից բանկերի միջև: Բացի այդ, միջոցների փոխանցման համակարգերի շարքին են դասվում նաև այն համակարգերը, որոնցով իրականացվում են միայն փոխանցման (հեռահաղորդակցման) ծառայություններ, ինչպիսիք են՝ միջազգային S.W.I.F.T. համակարգը, TELEX-ը, հեռատիպը, Fax-ը և այլն:

Հաճախորդին պայմանագրի էական պայմանները բացատրելու պարտավորությունը

Միջոցների փոխանցում իրականացնելիս յուրաքանչյուր անձ պետք է հստակ իմանա միջոցների փոխանցման ժամանակ ծագող իր իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև պարտականությունների չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից բխող պատասխանատվությունը: Ստանձնած պարտավորությունները ժամանակին և պատշաճ ձևով կատարելու համար հաճախորդը պետք է տեղյակ լինի իրեն սպասարկող բանկի «գործառնական օրվա» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 7), բանկի կողմից կիրառվող «անվտանգության արարողակարգի» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8), սակագների մասին և այլ էական պայմաններին: Այդ նպատակով բանկը «պայմանագիր կնքելիս պարտավոր է հաճախորդին պատշաճ կերպով ծանոթացնել նրա իրավունքներին, պարտականություններին և պայմանագրի էական պայմաններին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, կետ 1): Հակառակ դեպքում «հաճախորդի հայցով պայմանագիրը կարող է անվավեր ճանաչվել» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, կետ 2):

Գործառնական օրը: Վճարման հանձնարարականի ստացման պահը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածով սահմանվում է «գործառնական օր» հասկացությունը, որը բանկի աշխատանքային օրվա (բանկային օրվա) այն ժամանակահատվածն է, «որի ընթացքում բանկն ընդունում, ակցեպտավորում և (կամ) ուղարկում (փոխանցում) է վճարման հանձնարարականները, դրանք չեղյալ համարելու հանձնարարականները, ինչպես նաև տրամադրում է հաշվի մասին տեղեկացումներ (քաղվածքներ)» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ 1): Օրինակ՝ բանկի աշխատանքային օրը կարող է լինել 9:00-ից մինչև 18:00, իսկ վերը նշված գործողությունների համար սահմանված լինի գործառնական օր՝ ժամը 9:30-ից մինչև 14:00: Յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է սահմանում իր գործառնական օրվա ժամերը՝ որպես հիմք ընդունելով ԿԲ գործառնական ժամերը՝ գործող միջոցների փոխանցման համակարգերի աշխատանքային ժամերը (էլեկտրոնային վճարումների համակարգ, S.W.I.F.T. և այլն), որպեսզի կարողանա ժամանակին կատարել իր հաճախորդի կողմից տրված վճարման հանձնարարականները: «Բանկը պարտավոր է հաճախորդի առաջին իսկ պահանջով կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքելիս վերջինիս տեղեկացնել միջոցների փոխանցումների բանկի գործառնական ժամերի մասին»:

Հաճախ հարմարվելով իր հաճախորդների ցանկություններին՝ բանկերն ընդունում են հաճախորդների ներկայացրած վճարման հանձնարարականները և չեղյալ համարելու հանձնարարականները գործառնական ժամերից հետո, ինչը կարող է տեղի ունենալ նաև այն դեպքերում, երբ միջոցների փոխանցման համակարգերի (օրինակ՝ S.W.I.F.T.) աշխատանքային ժամերն ավելի երկար են, քան բանկի սահմանած գործառնական օրվա ժամերը, սակայն «դրանք համարվում են ստացված միջոցների փոխանցման հաջորդ գործառնական օրվա սկզբին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ 2): Օրինակ՝ A բանկը սահմանել է իր գործառնական օրը ժամը 9:30-ից մինչև 14:00, սակայն երեքշաբթի օրը միջոցների

փոխանցման համակարգով (օրինակ՝ S.W.I.F.T.-ով) վճարման հանձնարարական է ստանում ժամը 15:00-ին: Այս դեպքում վճարման հանձնարարականը բանկի կողմից ստացված է համարվում չորեքշաբթի օրվա գործառնական օրվա սկզբին՝ ժամը 9:30-ին:

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ, ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼԸ

Անվտանգության արարողակարգը

Բանկը չարաշահումներից, խարդախություններից, սխալներից խուսափելու նպատակով, որպես կանոն, մինչև միջոցների փոխանցման իրականացումը պետք է համոզվի, որ իրեն ներկայացված վճարման հանձնարարականի, չեղյալ համարելու հանձնարարականի ուղարկողը դրանցում նշված անձն է («պատկանելիության հավաստում») և հնարավորին չափով պետք է բացահայտի այդ հանձնարարականներում տեղ գտած սխալները: Այդ աշխատանքներն իրականացնելու նպատակով բանկի և հաճախորդի միջև կիրառվում են «փոխադարձ համաձայնությամբ սահմանված» հատուկ արարողակարգեր, որոնք անվանվում են սույն օրենքում որպես «անվտանգության արարողակարգեր» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, կետ 1):

Թղթային եղանակով վճարման հանձնարարականների, չեղյալ համարելու հանձնարարականների օգտագործման ժամանակ «պատկանելիության հավաստման» համար կիրառվում է հաճախորդի կողմից բանկին նախապես ներկայացված ստորագրությունների և կնիքի նմուշների (նմուշների քարտ) հետ հանձնարարականների վրա դրված ստորագրությունների և կնիքի համեմատման մեխանիզմը, իսկ սխալների բացահայտումն իրականացվում է դիտողական (վիզուալ) եղանակով: Էլեկտրոնային վճարումների համակարգերում, որպես ստանդարտ պրակտիկա, կիրառվում են հատուկ անվտանգության համակարգեր, որոնք պարունակում են «հատուկ ալգորիթմներ, նշանաբառեր, գաղտնաբառեր, գաղտնագրման և ինքնությունը հաստատող այլ միջոցներ» և թույլ են տալիս ոչ միայն կատարել «պատկանելիության հավաստումը», այլև բացահայտել որոշ սխալներ: Սակայն տվյալ հասկացությունը, սույն օրենքի իմաստով, չի վերաբերում այն արարողակարգերին, որոնք կիրառվում են բանկի կողմից միակողմանի:

«Բանկի կիրառած արարողակարգը պետք է ապահովի միջոցների փոխանցման անխոչընդոտ իրականացումը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, կետ 2) և որպես հիմք բանկն իր կողմից կիրառվող անվտանգության արարողակարգի մասին նախապես տեղեկացնում է հաճախորդին: Սակայն հաճախորդն «իրավունք ունի ստացող բանկից պահանջել իր կողմից տրված վճարման հանձնարարականների, այլ հաղորդագրությունների փոխանցման համար կիրառել պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով նախատեսված անվտանգության այլ արարողակարգ» (դա կարող է լինել, օրինակ, այն դեպքերում, երբ հաճախորդը չի վստահում բանկի կողմից կիրառվող անվտանգության արարողակարգերին, սակայն դա չի վերաբերում էլեկտրոնային վճարումների համակարգով վճարումների իրականացմանը, քանի որ համակարգում կիրառվում է ԿԲ-ի կողմից սահմանված հատուկ անվտանգության արարողակարգ): Բանկը կարող է համաձայնել կիրառելու հաճախորդի առաջարկած անվտանգության արարողակարգը, սակայն բանկին պաշտպանելու նպատակով օրենքի սույն հոդվածով սահմանվում է, որ նշված դեպքերում բանկը «պատասխանատվություն չի կրում այդ

արարողակարգի թերություններով պայմանավորված, ուղարկողի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար»:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածով սահմանվում է, որ միջոցների փոխանցման համակարգերի հուսալիության, անվտանգության, պաշտպանման մակարդակի բարձրացման նպատակով «Կենտրոնական բանկը կարող է սահմանել միջոցների փոխանցման համակարգերի կողմից կիրառվող անվտանգության արարողակարգերին ներկայացվող պահանջները» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, կետ 3): Նման պահանջների սահմանված լինելու դեպքում բանկերը պարտավոր են կիրառել անվտանգության այնպիսի արարողակարգեր, որոնք բավարարում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջները:

Վճարման հանձնարարականի վավերությունը

Վճարման հանձնարարականում «որպես ուղարկող նշված անձի» կամ նրա կողմից լիազորված անձի («ներկայացուցչի») կողմից բանկին անմիջականորեն ներկայացված վճարման հանձնարարականը սույն հոդվածի համաձայն համարվում է վավեր («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 1): Եթե բանկի և վճարման հանձնարարական ուղարկողի միջև փոխադարձ համաձայնությամբ («կնքված պայմանագրի համաձայն») սահմանված է անվտանգության արարողակարգ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8), և ուղարկողի կամ նրա անունից գործող լիազոր անձի կողմից բանկին ուղարկված (օրինակ՝ էլեկտրոնային վճարումների համակարգով) բոլոր վճարման հանձնարարականները պարտադիր կերպով պետք է վավերացվեն այդ արարողակարգի միջոցով, և բանկը «բարեխղճորեն» կատարել է այդ պայմանը, արարողակարգով վավերացված բոլոր վճարման հանձնարարականները նույնպես համարվում են վավեր: Սույն հոդվածի համաձայն ստացված վճարման հանձնարարականը վավեր ճանաչելու համար բանկից պահանջվում է նաև ապացուցել, որ նա ոչ միայն վավերացրել է այն անվտանգության արարողակարգի միջոցով, այլև կատարել է իր և ուղարկողի միջև կնքված պայմանագրով սահմանված կամ ուղարկողի կողմից տրված հանձնարարությունը՝ կապված ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականների ակցեպտավորման սահմանափակումների հետ: Օրինակ՝ ուղարկողը կարող է արգելել բանկին ակցեպտավորել իր կողմից տրված այն վճարման հանձնարարականները, որոնց մեջ նշված գումարը գերազանցում է իր կողմից սահմանվածին, կամ կարող է սահմանել իր այն հաշիվները բանկում, որոնցից թույլատրվում է դեբետագրում կատարել, կամ կարող է նախապես տրամադրել բանկին այն շահառուների ցուցակը, որոնց հետ նա գործարքներ է իրականացնում և արգելել բանկին ակցեպտավորելու այն վճարման հանձնարարականները, որտեղ նշված լինեն ցուցակի մեջ տեղ չգտած այլ շահառուներ և այլն: Միևնույն ժամանակ, բանկը պարտավոր չէ կատարել ուղարկողի այն հանձնարարականները (հրահանգները), որոնք հակասում են բանկի և ուղարկողի միջև կնքված գրավոր պայմանագրի դրույթներին կամ տրվել են բանկին «գործողություն ձեռնարկելու հնարավորություն» չընձեռող եղանակով և ժամկետում:

Այնուամենայնիվ, կարող են լինել դեպքեր, երբ անգամ անվտանգության արարողակարգով վավերացված վճարման հանձնարարականներն անվավեր են ճանաչվում: Դա լինում է այն դեպքերում, երբ որևէ անձ, «որին ուղարկողը երբևէ չի

լիազորել կամ վստահել վճարման հանձնարարականներ ուղարկել, ներկայացնել կամ անվտանգության արարողակարգը գործադրելու հետ կապված գործողություններ կատարել» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 3, ենթակետ ա) խարդախություն կատարելու մտադրությամբ «առանց ստացող բանկի կողմից դրա համար լիազորված լինելու, ուղարկողի տիրապետման ներքո գտնվող աղբյուրներից ձեռք է բերել տվյալ փոխանցումը հնարավոր դարձնող տեղեկություններ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 3, ենթակետ ա) (օրինակ՝ համապատասխան գաղտնաբառեր, կողեր, ծածկագրման բանալիներ և այլն) և ուղարկել է տվյալ վճարման հանձնարարականը՝ չօգտագործելով «ուղարկողի փոխանցման հնարավորությունները կամ միջոցները» (փոխանցումը իրականացվել է այլ համակարգչից) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 3, ենթակետ բ): Այս դեպքում, եթե վճարման հանձնարարականում որպես ուղարկող նշված անձն ապացուցի, որ տեղի է ունեցել վերը նշվածը, ապա նա («անկախ ուղարկողի մեղքի առկայությունից կամ տեղեկությունների ձեռքբերման եղանակից») կարող է հետ պահանջել վճարման հանձնարարականի հիման վրա բանկի կողմից փոխանցված գումարը, և բանկը կարող է վնաս կրել:

Խարդախությունները կարող են լինել 3 տիպի.

1. ստացող բանկն ստանում է վճարման հանձնարարականը, սակայն այն ուղարկվել է մի անձի կողմից, որը լիազորված չէր գործելու վճարման հանձնարարականում որպես ուղարկող նշված անձի անունից.
2. վճարման հանձնարարականը, իրոք, ուղարկվել է նրանում նշված ուղարկողի կողմից, սակայն մինչև ստացող բանկի կողմից ստանալը չլիազորված անձի կողմից այն խարդախորեն փոփոխման է ենթարկվել (օրինակ՝ փոփոխվել է շահառուն).
3. վճարման հանձնարարականը, իրոք, ուղարկվել է նրանում նշված ուղարկողի կողմից, և այն ստացվել է բանկի կողմից, սակայն մինչև բանկի կողմից այն կատարվելը (շահառուի բանկի դեպքում՝ վճարվելը) չլիազորված անձի կողմից խարդախորեն նոր հանձնարարական է տրվել՝ ուղղելու ստացված վճարման հանձնարարականը՝ օրինակ, փոխելով շահառուին:

Այն դեպքում, երբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված են անվտանգության արարողակարգերին ներկայացվող նվազագույն պահանջներ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 8, կետ 3), և ստացող բանկի կողմից կիրառվող անվտանգության արարողակարգը համապատասխանում է տվյալ նվազագույն պահանջներին, ապա դրանով անցած և ստացող բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականը վավեր է համարվում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 4): Սա նման է այն դեպքին, երբ հաճախորդն առաջարկում է կիրառել իր և բանկի միջև իր ներկայացրած անվտանգության արարողակարգը և բանկը, համաձայնելով կիրառել այն, «պատասխանատվություն չի կրում այդ արարողակարգի թերություններով պայմանավորված, ուղարկողի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար»: ՀՀ կենտրոնական բանկի կողմից անվտանգության արարողակարգերին ներկայացվող նվազագույն պահանջների սահմանված լինելու դեպքում բանկն այդ պահանջներին համապատասխան անվտանգության արարողակարգեր կիրառելիս պետք է վստահ լինի, որ նրանք լիովին կբացահայտեն ցանկացած կեղծիք կամ խարդախություն, և չպետք է պատասխանատվություն կրի այդ նվազագույն պահանջների թերություններով (թերի պահանջներ) պայմանավորված, ուղարկողի նկատմամբ ստանձնած

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար: Նման դեպքերում պատասխանատվություն պետք է կրի նվազագույն պահանջներ սահմանող անձը (տվյալ դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկը):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 1, 2 և 4 կետերից բխող միջոցների փոխանցման մասնակիցների «իրավունքներն ու պարտականությունները պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով փոփոխվել չեն կարող» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 5):

«Սույն հոդվածը վերաբերում է նաև վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականներին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 6):

Վճարման հանձնարարականի անվավերության հետևանքները

Այն դեպքերում, երբ ստացող բանկը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ով անվավեր ճանաչվող հանձնարարականն, այնուամենայնիվ, ակցեպտավորում է, և ուղարկողը կատարել է ստացող բանկին վճարելու իր պարտավորությունը (ստացող բանկը դեբետագրել է իր մոտ վարվող ուղարկողի հաշիվը), «ապա ուղարկողի պահանջով» ստացող բանկը պարտավոր է վերադարձնել իր կողմից ստացված գումարն այն չափով, որքանով իրավունք չուներ ստանալու, և «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ով սահմանված չափով տոկոսներ վճարել ուղարկողին «բանկի կողմից գումարի ստացման օրվանից մինչև այդ գումարն ամբողջությամբ վերադարձնելու օրը»: Ստացող բանկը պարտավոր չէ տոկոսներ վճարել ուղարկողին, և «ուղարկողը զրկվում է տոկոսներն ստանալու իրավունքից» միայն այն դեպքում, երբ ուղարկողն ստացող բանկից իր հաշվից գումարի դեբետագրման կամ վճարման հանձնարարականն ակցեպտավորելու մասին տեղեկացումը փոխհամաձայնեցված եղանակով (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) ստանալու պահից «հնարավոր կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում» առարկություններ չի ներկայացրել բանկին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 1): Այս կետը սահմանված է որոշ չափով ստացող բանկի շահերը պաշտպանելու համար: Առարկություններ ներկայացնելու համար առավելագույն ժամկետ է սահմանված, որպեսզի ուղարկողը, ստանալով բանկից իր հաշվից գումարի դեբետագրման կամ վճարման հանձնարարականն ակցեպտավորելու մասին տեղեկացումը, բարեխղճորեն կատարի իր պարտականությունը՝ պարզելու ստացող բանկի կողմից վճարման հանձնարարականի կատարման ընթացքում թույլ տված սխալը և անմիջապես տեղեկացնելու այդ մասին ստացող բանկին, որպեսզի ստացող բանկը կարողանա շահառուից հետ ստանալ նրան սխալմամբ ուղարկված միջոցները:

Ստացող բանկի գումարը հետ վերադարձնելու և տոկոսներ ուղարկողին վճարելու պարտավորությունը չի կարող փոփոխվել ստացող բանկի և ուղարկողի միջև կնքված պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 2):

Սխալը վճարման հանձնարարականում

Հնարավոր է, որ ուղարկողն ստացող բանկին վճարման հանձնարարական ներկայացնելիս սխալներ թույլ տա, օրինակ՝ սխալմամբ նշի տվյալ վճարման հանձնարարականում նշված գումարն ստանալու իրավունք չունեցող շահառու կամ ավելի մեծ գումար, կամ սխալմամբ ուղարկի արդեն ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակը: Այս դեպքերը բացահայտելու համար է, որ ստացող բանկի և ուղարկողի միջև կիրառվում է «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ում սահմանված անվտանգության արարողակարգը: Այն դեպքերում, երբ ստացող բանկի և ուղարկողի միջև կիրառվում է ստացող բանկի առաջարկած անվտանգության արարողակարգը, և ուղարկողը սխալ է թույլ տվել վճարման հանձնարարականում, սակայն այն ուղարկել է՝ պահպանելով սահմանված անվտանգության արարողակարգի բոլոր պահանջները, և ապացուցում է, որ սխալը կհայտնաբերվեր, եթե ստացող բանկը նույնպես պահպաներ այդ պահանջները, ապա ստացող բանկը պարտավոր է հետ վերադարձնել ուղարկողին.

1. ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում սխալ շահառու նշված լինելու կամ նախկինում ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակ ուղարկած լինելու դեպքում՝ ուղարկողի կողմից վճարման հանձնարականում նշված ամբողջ գումարը,
2. ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում ավել գումար նշված լինելու դեպքում՝ «ուղարկողի վճարման հանձնարարականում սխալմամբ նշված գումարի և ուղարկողի նախատեսված գումարի տարբերությունը»:

Նշված դեպքերից յուրաքանչյուրի ժամանակ «ստացող բանկը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուից հետ պահանջել վերջինիս սխալմամբ վճարված գումարը»: Այս կետը սահմանված է պաշտպանելու ուղարկողին, քանի որ այն դեպքերում, երբ ուղարկողը համաձայնում է կիրառել ստացող բանկի կողմից իրեն առաջարկված անվտանգության արարողակարգը, նա պետք է վստահ լինի, որ տվյալ անվտանգության արարողակարգի միջոցով ուղարկված սխալ պարունակող վճարման հանձնարարականները կհայտնաբերվեն ստացող բանկի կողմից և չեն կատարվի:

Ցանկացած դեպքում ստացող բանկն ուղարկողի հետ փոխհամաձայնեցված (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային) եղանակով տեղեկացնում է ուղարկում ուղարկողին իր կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորման կամ ուղարկողի հաշվի դեբետագրման մասին, և ուղարկողը պարտավոր է բացահայտել սխալը և «ոչ ուշ, քան վերոհիշյալ տեղեկացումն ստանալու պահից 60 օրվա ընթացքում» անմիջապես հայտնել այդ մասին ստացող բանկին: Հակառակ դեպքում, եթե ստացող բանկն ապացուցի, որ ուղարկողը չի կատարել կամ ուշացմամբ է կատարել ստացող բանկին սխալի մասին տեղեկացման իր պարտավորությունը, ուղարկողին գումարը հետ վերադարձնելու ստացող բանկի պարտավորությունը մնում է, և բանկը կարող է ուղարկողից պահանջել, և ուղարկողը պարտավոր է հատուցել բանկին սխալի հետևանքով բանկի կրած վնասները, սակայն «հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ վճարման հանձնարարականի գումարը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետ 2): Այս կետը սահմանվում է՝ պաշտպանելու ստացող բանկի շահերը, քանի որ նա կարող է վնասներ կրել ուղարկողի կողմից ստացող բանկից ստացված վճարման հանձնարարականի ակցեպտավորման կամ իր հաշվի դեբետագրման մասին տեղեկացման հիման վրա սխալի բացահայտման և բանկին անմիջապես այդ մասին տեղեկացման պարտականության թերի կատարման պատճառով:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածով սահմանվածը վերաբերում է նաև «վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականներին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետ 3):

Վճարման հանձնարարականի ուղարկումը միջոցների փոխանցումների
կամ հաղորդակցման այլ համակարգի միջոցով

Հաճախ ուղարկողն ստացող բանկին վճարման հանձնարարականներ ուղարկելիս օգտվում է միջոցների փոխանցումների (օրինակ՝ բանկ-բանկ փոխանցումների ժամանակ՝ էլեկտրոնային վճարումների համակարգ, S.W.I.F.T.) կամ հաղորդակցման այլ համակարգից (օրինակ՝ հեռատիպ, ֆաքս, հեռախոս և այլն): Նման դեպքերում միջոցների փոխանցումների կամ հաղորդակցման այլ համակարգերը համարվում են ուղարկողի վճարման հանձնարարականները կամ այլ հաղորդագրությունները փոխանցելու համար ընտրված գործակալ: Կարող են լինել դեպքեր, երբ ուղարկողի կողմից համակարգին տրված վճարման հանձնարարականը չի համապատասխանում ստացող բանկի կողմից համակարգից ստացված վճարման հանձնարարականին: Այսպիսի դեպքերում «ստացող բանկը հիմք է ընդունում համակարգից ստացված վճարման հանձնարարականը» և դրանում նշված տվյալները («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 12, կետ 1), և օգտագործված միջոցների փոխանցման համակարգերի կամ հաղորդակցման այլ համակարգերի թերությունների պատճառով վճարման հանձնարարականների սխալ կատարումից վնասներ է կրում ուղարկողը՝ փոխանցման համար համակարգ ընտրողը:

Նշվածը չի վերաբերում միայն ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին, քանի որ ՀՀ կենտրոնական բանկը տվյալ համակարգի սեփականատերն է, և նա պատասխանատու է համակարգի թերությունների պատճառով վճարման հանձնարարականների սխալ կատարման համար («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 12, կետ 2): Տվյալ դեպքում համակարգին տրված հանձնարարականը դիտարկվում է որպես ՀՀ կենտրոնական բանկին տրված, և դրա սխալ կատարման համար ՀՀ կենտրոնական բանկը պատասխանատու է որպես միջնորդ բանկ:

Հոդվածում նշվածը վերաբերում է նաև «վճարման հանձնարարականները չեղյալ համարելու հանձնարարականներին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 12, կետ 3):

Շահառուի նույնացումը

Շահառուի բանկը վճարման հանձնարարականում նշված գումարը շահառուին վճարելուց առաջ առաջին հերթին պարտավոր է նույնացնել նրան, որպեսզի գումարը վճարի ուղարկողի կողմից նախատեսված շահառուին: Սակայն լինում են դեպքեր, երբ միջոցների փոխանցման նախաձեռնողը վճարման հանձնարարականում շահառուին նշելիս սխալ է թույլ տալիս՝ նշվում է շահառուին չնույնացնող հաշվի համար կամ անուն: Նույնը կարող է տեղի ունենալ, երբ խարդախության հետևանքով փոփոխվեն շահառուին նույնացնող վավերապայմանները: «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետը սահմանված է այն դեպքերի համար, երբ շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականը պարունակում է հանձնարարություն՝ վճարում իրականացնելու շահառուի բանկում


չսպասարկվող կամ չնույնացվող շահառուին: Նման դեպքերում, երբ վճարման հանձնարարականում նշված շահառուն չի նույնականացվում «կամ տվյալ բանկին անհայտ է շահառուի անունը, հաշվի համարը կամ նույնացման համարը», վճարման հանձնարարականը ենթակա չէ շահառուի բանկի կողմից ակցեպտավորման, «և ոչ ոք շահառուի իրավունքները ձեռք չի բերում» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 1): Տվյալ միջոցների փոխանցման շղթայում ներգրավված յուրաքանչյուր օղակ (ուղարկողը) իրավունք ունի հետ ստանալու տվյալ վճարման հանձնարարականի հետ կապված՝ իր փոխանցած (վճարած) գումարը:

Այն դեպքերում, երբ շահառուի բանկը նույնացնում է շահառուին անունով և հաշվի կամ նույնացման այլ համարով, սակայն անունն ու համարը նույնականացնում են տարբեր շահառուների, ապա շահառուի բանկը շահառուին նույնականացնելիս հիմք է ընդունում համարը, եթե նա տեղյակ չէ, որ անունն ու համարը նույնականացնում են տարբեր անձանց: «Շահառուի բանկը պարտավոր չէ պարզել. թե արդյոք անունն ու համարը նույնականացնում են նույն անձին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 2, ենթակետ ա): Սույն կետը սահմանված է այն մեծամասնություն կազմող դեպքերի համար, երբ շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականները բանկում ենթարկվում են ավտոմատ մշակման, որի ընթացքում շահառուի նույնականացումն իրականացվում է հաշվի համարի կամ նույնացման այլ համարի հիման վրա առանց մարդու միջամտության: Բանկերն այսօր նախընտրում են և հնարավորին չափով ավտոմատացնում իրենց մոտ իրականացվող փաստաթղթերի մշակման գործընթացը, քանի որ դրանց մշակումը ձեռքի կատարմամբ բավականին աշխատատար է, թանկ և չի բացառում սխալի կատարման հնարավորությունը: Այս դեպքերում վճարողը պարտավոր չէ վճարել միայն այն դեպքում, երբ նա բանկ չէ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 3, ենթակետ ա) և կարող է ապացուցել, որ «վճարման հանձնարարականում համարով նույնացված անձը, օրենքի կամ պայմանագրի համաձայն, իրավունք չուներ վճարողից վճարում ստանալ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 3, ենթակետ բ), և մինչև վճարողի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումը տեղյակ չի պահվել «շահառուին համարով նույնացնելու շահառուի բանկի իրավունքի մասին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 3, ենթակետ գ): Շահառուից վճարված գումարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ պահանջելու իրավունքը նման դեպքում տրվում է վճարողի բանկին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 4, ենթակետ բ): Մնացած դեպքերում վճարողը պարտավոր է վճարել, և շահառուից վճարված գումարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ պահանջելու իրավունքը տրվում է վճարողին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 4, ենթակետ ա):

Այն դեպքում, երբ շահառուի բանկը վճարել է վճարում ստանալու իրավունք չունեցող, սակայն ուղարկողի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում նշված անունով նույնացված շահառուին կամ տեղյակ էր, որ ուղարկողի վճարման հանձնարարականում շահառուի անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, վճարման հանձնարարականը համարվում է չակցեպտավորված («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, կետ 2, ենթակետ բ):

Օրինակ 1. X-ը ցանկանում է 1.000.000 դրամ փոխանցել «Արմեն» ՍՊԸ-ին, որն սպասարկվում է բանկ B-ում, և որի հաշվեհամարն է տվյալ բանկում՝ N12345: X-ը վճարման հանձնարարական է տալիս իրեն սպասարկող բանկ A-ին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել բանկ B-ում սպասարկվող «Արման» ՍՊԸ-ին («Արմեն» ՍՊԸ-ի փոխարեն)՝ գումարը հաշվեգրելով տվյալ բանկում գտնվող նրա N12346 հաշվին (N12345-ի փոխարեն): Բանկ B-ն, լինելով տվյալ դեպքում շահառուի բանկը, մինչև շահառուին վճարում իրականացնելը պարտավոր է նույնականացնել նրան: Սակայն, փնտրում իրականացնելով տվյալների շտեմարանում (բազայում), շահառուի բանկը չի գտնում իր մոտ սպասարկվող նման հաճախորդ՝ «Արման» ՍՊԸ՝ N12346 հաշվեհամարով: Նման դեպքում բանկ B-ն չի ակցեպտավորում վճարման հանձնարարականը և հետ է ուղարկում ստացված գումարը:


Օրինակ 2. X-ը ցանկանում է 1.000.000 դրամ փոխանցել «Արմեն» ՍՊԸ-ին, որն սպասարկվում է բանկ B-ում, և որի հաշվեհամարն է տվյալ բանկում՝ N12345: X-ը վճարման հանձնարարական է տալիս իրեն սպասարկող բանկ A-ին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել բանկ B-ում սպասարկվող «Արմեն» ՍՊԸ-ին՝ գումարը հաշվեգրելով տվյալ բանկում գտնվող նրա N12346 հաշվին (N12345-ի փոխարեն): X-ը նախապես, մինչև միջոցների փոխանցման նախաձեռնումը, չի տեղեկացվել այն մասին, որ շահառուի բանկը շահառուին նույնացնելիս հիմնվելու է նրա հաշվի համարի վրա: Բանկ B-ն, լինելով տվյալ դեպքում շահառուի բանկը, մինչև շահառուին վճարում իրականացնելը փնտրում է տվյալների շտեմարանում (բազայում) շահառուին N12346 հաշվեհամարով (փաստաթղթի մշակումն իրականացվում է ավտոմատ ռեժիմով) և գտնում «Արմինե» ԲԸ-ին: Բանկ B-ն տեղյակ չէ, որ շահառուի անունն ու հաշվի համարը նույնացնում են տարբեր անձանց:



Նման դեպքում բանկ B-ն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը և 1.000.000 դրամ գումարը հաշվեգրում «Արմինե» ԲԸ-ի N12346 հաշվին: Այն դեպքում, երբ՝ ա) X-ը բանկ չէ և ապացուցում է, որ «Արմինե» ԲԸ-ի կնքված պայմանագրի համաձայն նշված գումարն ստանալու իրավունք չուներ, բանկ A-ն պարտավոր է 1.000.000 դրամ վերադարձնել X-ին: Տվյալ դեպքում «Արմինե» ԲԸ-ից հատուցում կարող է պահանջել բանկ A-ն, բ) մնացած դեպքերում, և եթե X-ը բանկ է (ցանկացած բանկ պետք է տեղյակ լինի, որ շահառուին նույնացումը կարող է իրականացվել շահառուի բանկի կողմից՝

հիմնվելով հաշվի համարի վրա), X-ը պարտավոր էր վճարել և կարող է հատուցում պահանջել «Արմինե» ԲԸ-ից:

Օրինակ 3. X-ը ցանկանում է 1.000.000 դրամ փոխանցել «Արմեն» ՍՊԸ-ին, որն սպասարկվում է բանկ B-ում, և որի հաշվեհամարն է տվյալ բանկում՝ N12345: X-ը վճարման հանձնարարական է տալիս իրեն սպասարկող բանկ A-ին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել բանկ B-ում սպասարկվող «Արմեն» ՍՊԸ-ին, գումարը հաշվեգրելով տվյալ բանկում գտնվող նրա N12346 հաշվին (N12345-ի փոխարեն): X-ը նախապես, մինչև միջոցների փոխանցման նախաձեռնումը, տեղեկացվել է այն մասին, որ շահառուի բանկը շահառուին նույնացնելիս հիմնվելու է նրա հաշվի համարի վրա: Բանկ B-ն, լինելով տվյալ դեպքում շահառուի բանկը, մինչև շահառուին վճարում իրականացնելը տվյալների շտեմարանում (բազայում) շահառուին փնտրում է N12346 հաշվեհամարով (փաստաթղթի մշակումն իրականացվում է ավտոմատ ռեժիմում) և գտնում «Արմինե» ԲԸ-ին: Բանկ B-ն տեղյակ չէ, որ շահառուի անունն ու հաշվի համարը նույնացնում են տարբեր անձանց:



Նման դեպքում բանկ B-ն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը և 1.000.000 դրամ գումարը հաշվեգրում «Արմինե» ԲԸ N12346 հաշվին: Նման դեպքում կարևոր չէ՝ X-ը բանկ է, թե՝ ոչ (եթե բանկ A-ն ապացուցում է, որ X-ը նախապես տեղեկացվել է այն մասին, որ շահառուի բանկը շահառուին նույնացնելիս հիմնվելու է հաշվի համարի վրա), նա պարտավոր է վճարել: Տվյալ դեպքում X-ը կարող է հատուցում պահանջել «Արմինե» ԲԸ-ից:

Միջնորդ բանկի և շահառուի բանկի նույնացումը

Ստացող բանկը տարբեր ձևով կարող է նույնականացնել միջնորդ կամ շահառուի բանկին: Նույնացման ժամանակ կարող է հիմք ընդունվել ուղարկողի վճարման հանձնարարականում նշված միջնորդ կամ շահառուի բանկի անունը կամ համարը (կոդը):

Այն դեպքում, երբ ուղարկողի վճարման հանձնարարականում միջնորդ կամ շահառուի բանկը նույնացված է միայն համարով, ապա ստացող բանկը «դրանց նույնականացնելիս հիմք է ընդունում միայն միջնորդ բանկի կամ շահառուի բանկի համարը և պարտավոր չէ պարզել, թե արդյոք համարը նույնացնում է տվյալ բանկը»


(«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 1):

Այն դեպքում, երբ ուղարկողի վճարման հանձնարարականում միջնորդ կամ շահառուի բանկը նույնացվում են անվանմամբ և համարով (կոդով), «սակայն անվանումն ու համարը նույնացնում են տարբեր անձանց», ապա.

1. եթե ստացող բանկը միջնորդ կամ շահառուի բանկին նույնացնելու համար հիմք է ընդունել համարը և վճարման հանձնարարականը կատարելու պահին տեղյակ չէր, որ բանկի անվանումն ու համարը նույնականացնում են տարբեր բանկեր, ուղարկողի՝ բանկ լինելու դեպքում պարտավոր է «հատուցել միջնորդ բանկի կամ շահառուի բանկի համարը հիմք ընդունելով վճարման հանձնարարականը կատարելու կամ կատարելու փորձի հետևանքով ստացող բանկին պատճառած վնասները» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 2, ենթակետ ա), քանի որ բանկը պետք է տեղյակ լինի, որ յուրաքանչյուր այլ բանկ միջնորդ կամ շահառուի բանկ նույնականացնելիս կարող է հիմնվել հաշվի համարի վրա: Նույնը վերաբերում է ոչ բանկ ուղարկողին, եթե ստացող բանկն ապացուցում է, որ ուղարկողը մինչև ստացող բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումը տեղեկացվել է «ստացող բանկի՝ միջնորդ բանկին կամ շահառուի բանկին միայն համարով նույնականացնելու իրավունքի մասին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 2, ենթակետ բ).
2. Ստացող բանկը միջնորդ բանկին կամ շահառուի բանկին նույնացնելիս կարող է հիմնվել դրանց անվանման վրա, անկախ այն հանգամանքից՝ ուղարկողը բանկ է, թե՝ ոչ, եթե վճարման հանձնարարականը կատարելու պահին տեղյակ չէր, որ բանկի անվանումն ու համարը նույնացնում են տարբեր բանկեր: «Ստացող բանկը պարտավոր չէ պարզել, թե արդյոք անվանումն ու համարը նույնականացնում են նույն բանկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 2, ենթակետ գ):
3. Եթե ստացող բանկը վճարման հանձնարարականը կատարելու պահին տեղյակ է, որ դրանում նշված միջնորդ կամ շահառուի բանկի անվանումն ու համարը նույնացնում է տարբեր բանկեր, այնուամենայնիվ, նրանց նույնացնելիս, հիմք է ընդունել միայն անվանումը կամ միայն համարը, «ապա դա համարվում է ստացող բանկի՝ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածի 1 կետի ա ենթակետով սահմանված պարտավորության ոչ պատշաճ կատարում» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ 2, ենթակետ դ):

Օրինակ 1. X-ը, որն սպասարկվում է բանկ A-ում, ցանկանում է 1.000.000 դրամ փոխանցել Y-ին, որն սպասարկվում է բանկ B-ում՝ հանձնարարելով գումարը հաշվեգրել Y-ի՝ բանկ B-ում գտնվող N12345 հաշվին: Բանկ A-ն և բանկ B-ն չունեն թղթակցային հարաբերություններ: Փոխանցումն իրականացնելու համար X-ն ընտրում է միջնորդ բանկ (բանկ C), որի հետ թղթակցում են և բանկ A-ն, և բանկ B-ն: Ի կատարումն X-ի կողմից տրված հանձնարարականի՝ բանկ A-ն իր հերթին վճարման հանձնարարական է ուղարկում բանկ C-ին, որտեղ նշում է որպես շահառուի բանկ բանկ B-ն, սակայն անվանման հետ մեկտեղ սխալմամբ նշում է ոչ թե բանկ B-ի, այլ բանկ D-ի

հաշվեհամարը: Այն դեպքում, երբ միջնորդ բանկի (բանկ C) մոտ վճարման հանձնարարականների մշակման գործընթացը կատարվում է ավտոմատ եղանակով, բանկ C-ն ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի՝ նոր վճարման հանձնարարական կուղարկի սխալ հաշվեհամարով նույնացված բանկ D-ին: Եթե բանկ D-ում գոյություն ունենա N12345 հաշվեհամար (հաճախորդ Z), ապա սույն օրենքի հոդված 12-ի դրույթների համաձայն՝ բանկը կարող է հիմնվելով հաշվի համարի վրա, 1.000.000 դրամ գումարը հաշվեգրել տվյալ հաշվին: Նման դեպքում բանկ C-ն ճշգրիտ կատարել է բանկ A-ի կողմից իրեն տրված վճարման հանձնարարականը, և սխալի պատճառով իր կողմից կրած վնասների և ծախսերի հատուցում ստանալու իրավունք ունի: Սխալ թույլ տված բանկ A-ն պարտավոր է կամ 1.000.000 դրամի գումարը վերադարձնել X-ին, կամ էլ ուղղել սխալը՝ 1.000.000 դրամ փոխանցելով ճիշտ շահառուի բանկում (բանկ B) սպասարկվող Y-ին: Z-ից 1.000.000 դրամի հետ պահանջելու իրավունքը տվյալ դեպքում պատկանում է բանկ A-ին:



Օրինակ 2. Նման է օրինակ 1-ին, սակայն բանկ D-ում չկա N12345 հաշվի համար ունեցող շահառու: Նման դեպքում բանկ D-ն չի ակցեպտավորում իր կողմից ստացված վճարման հանձնարարականը, միջոցների փոխանցումը չի ավարտվում, և բանկ D-ն պարտավոր է հետ ուղարկել ստացված 1.000.000 դրամի գումարը: Սխալ թույլ տված կողմը՝ տվյալ դեպքում բանկ A-ն, պարտավոր է փոխհատուցել տվյալ միջոցների փոխանցման գործընթացում ներգրավված կողմերի կրած վնասները և ծախսերը:

Օրինակ 3. Նման է օրինակ 1-ին, սակայն բանկ A-ի ուղարկած վճարման հանձնարարականում նշված է շահառուի բանկի այնպիսի հաշվեհամար, որ բանկ C-ն չի ճանաչում և չի կարող նույնականացնել: Նման դեպքերում բանկ C-ն չի ակցեպտավորում իր կողմից ստացված վճարման հանձնարարականը, միջոցների փոխանցումը չի ավարտվում, և բանկ C-ն պարտավոր է հետ փոխանցել ստացված 1.000.000 դրամի գումարը: Սխալ թույլ տված կողմը՝ տվյալ դեպքում բանկ A-ն, պարտավոր է

փոխհատուցել տվյալ միջոցների փոխանցման գործընթացում ներգրավված կողմերի կրած վնասները և ծախսերը:

Օրինակներ 1, 2 և 3-ում, եթե սխալ թույլ տված կողմը միջոցների փոխանցման նախաձեռնողն է, և բանկ չէ, ապա նա պարտավոր չէ վճարել, եթե ապացուցի, որ բանկ A-ն մինչև տվյալ միջոցների փոխանցման նախաձեռնումը տեղյակ չի պահել իրեն, որ բանկերը միջնորդ կամ շահառուի բանկ նույնականացնելիս իրավունք ունեն հիմք ընդունել հաշվի համարը:

Վճարման հանձնարարականն ակցեպտավորելը

Ուղարկողի կողմից ստացող բանկին ներկայացված վճարման հանձնարարականն իրենից ներկայացնում է ուղարկողի պահանջը բանկին՝ կատարելու հանձնարարականը (եթե տվյալ բանկը շահառուի բանկը չէ) կամ վճարելու հանձնարարականում նշված գումարը (եթե տվյալ բանկը շահառուի բանկն է): Այդ պահանջը կարող է ստացող բանկի կողմից կամ ակցեպտավորվել, կամ մերժվել: Սույն հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ վճարման հանձնարարականներն ակցեպտավորվում են բանկի կողմից: Ակցեպտավորելով վճարման հանձնարարականը՝ բանկը պարտավորություն է ստանձնում՝ ա) ուղարկողի հանդեպ, եթե բանկը շահառուի բանկ չէ կամ բ) շահառուի հանդեպ, եթե բանկը շահառուի բանկն է, որը սահմանվում է «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ում և հոդված 27-ում համապատասխանորեն: «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետում սահմանվում է շահառուի բանկից տարբեր ստացող բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումը, ըստ որի «ստացող բանկը (բացի շահառուի բանկից) վճարման հանձնարարականն ակցեպտավորում է, երբ կատարում է» այն՝ ուղարկելով ուղարկողի վճարման հանձնարարականի պահանջներին համապատասխան վճարման հանձնարարական կամ միջնորդ բանկին, կամ շահառուի բանկին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19): Սակայն եթե ուղարկողի կողմից բանկին ներկայացված վճարման հանձնարարականում սահմանված է «կատարման օր» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19), ապա վճարման հանձնարարականն ակցեպտավորված չի համարվում մինչև «կատարման օրը», քանի որ ուղարկողը կարող է մինչև կատարման օրվա հասնելը տրված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական ներկայացնել ստացող բանկին և այն դեպքում, երբ բանկն, այնուամենայնիվ, կատարել է վճարման հանձնարարականը մինչև կատարման օրը, նա պարտավոր է վերադարձնել ուղարկողին վճարման հանձնարարականի գումարը և կարող է «այդ գումարը պահանջել շահառուից՝ օրենքով սահմանված կարգով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 4):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ կետում սահմանվում է շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումը, ըստ որի վճարման հանձնարարականը շահառուի բանկի կողմից ակցեպտավորված է համարվում, երբ.

1. նա վճարում է շահառուին (օրինակ՝ կանխիկ եղանակով) կամ փոխհամաձայնեցված (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային) եղանակով տեղեկացնում է ուղարկում շահառուին «վճարման հանձնարարականի ստացման կամ վճարման հանձնարարականի ստացման կապակցությամբ

շահառուի հաշիվը կրեդիտագրելու» մասին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ ա): Սույն կետը սահմանված է այն դեպքերի համար, երբ շահառուի բանկը, ստանալով ուղարկողի վճարման հանձնարարականը, մինչև ուղարկողից հանձնարարականում նշված գումարի ստացումը, վճարում է շահառուին (կանխիկ կամ անկանխիկ եղանակով): Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տեղեկացման մեջ շահառուի բանկը նշում է, որ շահառուն չի կարող տնօրինել միջոցները մինչև ուղարկողի կողմից գումարի վճարումը.

2. «ուղարկողը վճարում է շահառուի բանկին վճարման հանձնարարականի գումարը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ բ): Սույն կետը սահմանված է այն դեպքերի համար, երբ ուղարկողը բանկ է: Նման դեպքերում վճարման հանձնարարականը շահառուի բանկի կողմից ակցեպտավորված է համարվում, երբ՝ ա) ՀՀ կենտրոնական բանկի կամ միջոցների փոխանցման համակարգի միջոցով հաշվարկներ իրականացնելիս շահառուի բանկն ստանում է ՀՀ կենտրոնական բանկից կամ միջոցների փոխանցման համակարգի միջոցով տեղեկացում (քաղվածք)՝ վերջնահաշվարկի կատարման մասին («պարտավորության վերջնահաշվարկը») («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 2), բ) փոխադարձ թղթակցային հաշիվների միջոցով վճարումներ իրականացնելիս թղթակցող բանկից իր «նոստրո» հաշվի կրեդիտագրման մասին տեղեկացում (քաղվածք) ստանալուց հետո շահառուի բանկը կրեդիտագրված գումարը դուրս է գրում կամ եթե դուրս չի գրում՝ այն օրացուցային օրվա ավարտին, որի ընթացքում կարող էր դուրս գրել, կամ

3. «վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ շահառուի բանկի գործառնական օրվա սկզբին, եթե այդ պահին ուղարկողը վճարել է բանկին վճարման հանձնարարականի գումարը, կամ ուղարկողի՝ տվյալ բանկում գտնվող հաշվի մնացորդը բավարար է վճարման հանձնարարականի գումարը հատուցելու համար»: «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը սահմանված է այն դեպքերի համար, երբ ուղարկողի և շահառուի հաշիվները գտնվում են նույն բանկում (այս դեպքերում կարևոր չէ՝ ուղարկողը բանկ է, թե՝ ոչ), և վճարումը շահառուի բանկի կողմից իրականացվելու է ուղարկողի հաշվի դեբետագրմամբ և շահառուի հաշվի կրեդիտագրմամբ: Նման դեպքերում վճարման օրն ուղարկողի հաշվին պետք է բավարար քանակությամբ միջոցներ լինեն վճարման պարտավորությունը կատարելու համար (եթե այլ բան նախատեսված չէ բանկ-հաճախորդ պայմանագրով): Երբեմն, ուղարկողի հաշվի մնացորդի բավարար լինելու հարցի որոշումը ձգձգվում է մինչև վճարման օրվա ավարտը: Այդ պատճառով նման պարագաներում հաշվին բավարար քանակությամբ միջոցների առկայության հարցը որոշվում է վճարման հանձնարարականի վճարման օրվան հաջորդող օրվա սկզբին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տվյալ վճարման հանձնարարականը մերժվել է մինչև տվյալ գործառնական օրվա սկիզբը կամ շահառուի բանկի գործառնական օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, կամ «վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, եթե ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրն

սկսվում է ավելի ուշ, քան ստացող բանկի գործառնական օրը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ գ): Այս ենթակետը սահմանված է այն դեպքերի համար, երբ ուղարկողը և շահառուի բանկը գործում են տարբեր ժամանակային գոտիներում կամ ուղարկողի գործառնական օրվա սկիզբը չի համընկնում շահառուի բանկի գործառնական օրվա սկզբի հետ (մասնավորապես, երբ ուղարկողի գործառնական օրն սկսվում է ավելի ուշ, քան շահառուի բանկում): Նման դեպքերում, անգամ եթե ուղարկողը վճարման օրը պարտաճանաչորեն կատարի հանձնարարականում նշված գումարը շահառուի բանկին իր վճարելու պարտավորությունը, այդ մասին շահառուի բանկը կարող է տեղեկանալ որոշ ժամանակ անց:

Օրինակ 1. X-ը 08.10.1999 թ. վճարման հանձնարարական է ներկայացնում բանկ A-ին՝ հանձնարարելով 09.10.1999 թ. 10.000 դրամ վճարել նույն բանկում սպասարկվող Y-ին: 09.10.1999 թ. X-ի հաշվի մնացորդը չի բավարարում վճարումը իրականացնելու համար: Նման դեպքում բանկ A-ն կարող է.

1. կրեդիտագրել (այն դեպքում, երբ հանձնարարվում է կանխիկով վճարում իրականացնել, ապա՝ վճարել) Y-ի հաշիվը (փաստորեն վարկավորելով X-ին) և այդ մասին տեղեկացում ուղարկել Y-ին, կամ
2. 09.10.1999 թ. գործառնական օրվա ընթացքում պարբերաբար ստուգել X-ի հաշվի մնացորդը և վճարումն իրականացնելու համար բավարար լինելու դեպքում՝ դեբետագրել X-ի հաշիվը և կրեդիտագրել (կամ կանխիկով վճարում իրականացնելու հանձնարարականի դեպքում՝ վճարել) Y-ի հաշիվը՝ այդ մասին տեղեկացում ուղարկելով Y-ին:

Երկու դեպքում էլ վճարման հանձնարարականն ակցեպտավորված է համարվում, երբ բանկը վճարում է շահառուին կամ նրան տեղեկացնում է վճարման հանձնարարականի ստացման կամ շահառուի հաշվի կրեդիտագրման մասին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ ա): Այն դեպքում, երբ գործառնական օրվա ավարտին միայն X-ի հաշվի մնացորդը բավարարի վճարումն իրականացնելու համար, վճարման հանձնարարականն ակցեպտավորված կհամարվի հաջորդ գործառնական օրվա՝ 10.10.1999 թ. սկզբին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ գ):

Օրինակ 2. 08.10.1999 թ. բանկ A-ն ՀՀ կենտրոնական բանկի միջոցով (կամ էլեկտրոնային վճարումների համակարգով) վճարման հանձնարարական է ուղարկում բանկ B-ին՝ հանձնարարելով 09.10.1999 թ. 10.000 դրամ վճարել բանկ B-ում սպասարկվող Y-ին: 08.10.1999 թ. բանկ B-ն ՀՀ կենտրոնական բանկից (կամ էլեկտրոնային վճարումների համակարգով) տեղեկացում (քաղվածք) է ստանում ՀՀ կենտրոնական բանկում վարվող իր հաշվի կրեդիտագրման մասին (վերջնահաշվարկի կատարման մասին):

Տվյալ դեպքում բանկ B-ի կողմից ստացված վճարման հանձնարարականն ակցեպտավորված է համարվում տեղեկացման ստացման պահից («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ բ):

Օրինակ 3. 08.10.1999 թ. բանկ A-ն վճարման հանձնարարական է ուղարկում բանկ B-ին՝ հանձնարարելով 09.10.1999 թ. 10.000 դրամ վճարել բանկ B-ում սպասարկվող Y-ին: Բանկ B-ի «նոստրո» հաշիվը վարվում է բանկ A-ում:

08.10.1999 թ. բանկ B-ն բանկ A-ից տեղեկացում (քաղվածք) է ստանում իր «նոստրո» հաշվի կրեդիտագրման մասին:

Այն դեպքում, եթե 08.10.1999 թ. բանկ B-ն դուրս գրի իր «նոստրո» հաշվից ստացված 10.000 դրամը, վճարման հանձնարարականն ակցեպտավորված կհամարվի տվյալ գումարի դուրսգրման պահից: Հակառակ դեպքում, երբ բանկ B-ն դուրս չի գրում տվյալ գումարը, սակայն տեղեկացված էր իր հաշվի կրեդիտագրման մասին, վճարման հանձնարարականն ակցեպտավորված կհամարվի 08.10.1999 թ. օրացուցային օրվա ավարտին (24:00-ին) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ բ):

Օրինակ 4. Ուղարկող X-ը, որը գործում է օտար երկրում, 08.10.1999 թ. 1.000 ԱՄՆ դոլար է փոխանցում իր բանկի՝ բանկ A-ի միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործող Y-ին, որն սպասարկվում է բանկ B-ում: Վճարման հանձնարարականում որպես վճարման օր նշված է նույն օրը՝ 08.10.1999 թ.: Բանկ A-ն բարեխղճորեն կատարում է X-ի կողմից տրված հանձնարարականը և 08.10.1999 թ. իր հերթին վճարման հանձնարարական է ուղարկում Y-ին: X-ը և Y-ը տարբեր ժամանակային գոտիներում գտնվելու պատճառով (տարբերությունը 12 ժամ է) բանկ B-ն վճարման հանձնարարականը կստանա 09.10.1999 թ.: Այդ իսկ պատճառով վճարման հանձնարարականն ակցեպտավորված կհամարվի վճարման օրվան հաջորդող օրվա սկզբին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետ գ):

Ցանկացած դեպքում, երբ շահառուի բանկը չի ստանում վճարման հանձնարարականը, անգամ եթե ստանում է տեղեկացում (քաղվածք) իր հաշվի կրեդիտագրման մասին, ուղարկողի վճարման հանձնարարականը ակցեպտավորված չի համարվում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 3):

Այնուամենայնիվ, լինում են դեպքեր, երբ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդվածի 2-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում շահառուի բանկը չի ակցեպտավորում ստացված վճարման հանձնարարականը և մերժում է այն: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ վճարման հանձնարարականում նշված շահառուն տվյալ բանկում հաշիվ չունի, կամ հաշիվը փակված է, կամ շահառուի բանկն «օրենքով նախատեսված դեպքերում իրավունք չունի շահառուի հաշվին միջոցներ հաշվեգրել կամ ստանալ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 3):

Եթե ուղարկողի կողմից բանկին ներկայացված վճարման հանձնարարականում սահմանված է «կատարման օր» կամ «վճարման օր» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 19, 24), ապա վճարման հանձնարարականն ակցեպտավորված չի համարվում վճարողի բանկի կողմից՝ մինչև «կատարման օրը», եթե վճարողի բանկը շահառուի բանկը չէ կամ մինչև «վճարման օրը», եթե վճարողի բանկը շահառուի բանկն է, քանի որ ուղարկողը կարող է մինչև վճարման հանձնարարականում նշված օրվա հասնելը տրված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական ներկայացնել և այն դեպքում, երբ բանկն, այնուամենայնիվ, կատարել է վճարման հանձնարարականը մինչև տվյալ օրը, նա

պարտավոր է վերադարձնել ուղարկողին վճարման հանձնարարականի գումարը և կարող է «այդ գումարը պահանջել շահառուից՝ օրենքով սահմանված կարգով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 4):

Օրինակ 5. Միջոցների փոխանցման նախաձեռնողը՝ X-ը, 01.04.1999 թ. վճարման հանձնարարական է տալիս իրեն սպասարկող բանկ A-ին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել Y-ին, որն սպասարկվում է նույն բանկում: Վճարման հանձնարարականում որպես վճարման օր է նշված 15.04.1999 թ.: Բանկ A-ն, ստանալով վճարման հանձնարարականը, անմիջապես կրեդիտագրում է Y-ի՝ իր մոտ վարվող հաշիվը և գումարը տրամադրում է նրան:

Տվյալ դեպքում, սույն հոդվածի 4 կետի համաձայն, բանկ A-ն սխալ է թույլ տվել, քանի որ X-ի կողմից տրված վճարման հանձնարարականը չէր կարող ակցեպտավորվել մինչև վճարման օրը՝ 15.04.1999 թ., և վճարման հանձնարարականն ակցեպտավորված չի համարվում: Սակայն, եթե X-ը մինչև վճարման օրը վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական տա բանկ A-ին, վերջինս պարտավոր է X-ին վերադարձնել մինչև վճարման օրը Y-ին վճարված 1.000.000 դրամ գումարը և կարող է այդ գումարը պահանջել շահառուից՝ օրենքով սահմանված կարգով:

Օրինակ 6. Միջոցների փոխանցման նախաձեռնողը՝ X-ը, 01.04.1999 թ. վճարման հանձնարարական է տալիս իրեն սպասարկող բանկ A-ին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել Y-ին, որն սպասարկվում է բանկ B-ում: Վճարման հանձնարարականում որպես կատարման օր է նշված 10.04.1999 թ.: Բանկ A-ն կատարում է վճարման հանձնարարականը 02.04.1999 թ.՝ իր հերթին վճարման հանձնարարական ուղարկելով բանկ B-ին: Բանկ B-ն, ստանալով 03.04.1999 թ. վճարման հանձնարարականը, անմիջապես կրեդիտագրում է իր մոտ վարվող Y-ի հաշիվը և գումարը տրամադրում է Y-ին:

Տվյալ դեպքում, սույն հոդվածի 4 կետի համաձայն, բանկ A-ն սխալ է թույլ տվել, քանի որ X-ի կողմից տրված վճարման հանձնարարականը չէր կարող ակցեպտավորվել մինչև կատարման օրը՝ 10.04.1999 թ., և վճարման հանձնարարականը ակցեպտավորված չի համարվում: Այն դեպքում, երբ X-ը մինչև կատարման օրը վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական տա բանկ A-ին, վերջինս պարտավոր է X-ին վերադարձնել մինչև կատարման օրը Y-ին փոխանցված 1.000.000 դրամ գումարը և կարող է այդ գումարը պահանջել շահառուից՝ օրենքով սահմանված կարգով:

Նշված երկու օրինակներում էլ բանկ A-ն սխալ պարունակող վճարման հանձնարարականի նախաձեռնողն է:

«Վճարման հանձնարարականի ակցեպտավորումը բացառում է դրա հետագա մերժումը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 5):

Վճարման հանձնարարականը մերժելը

Ոչ բոլոր դեպքերում է ստացող բանկն ակցեպտավորում ուղարկողի կողմից իրեն տրված վճարման հանձնարարականները: Երբեմն ստացող բանկը կարող է հնարավորություն չունենալ (օրինակ՝ տեխնիկայի խափանումը էլեկտրոնային

վճարումների համակարգով վճարումն իրականացնելու հանձնարարականի ներկայացման դեպքում) կամ որոշակի հանգամանքներից ելնելով՝ չկարողանալ ակցեպտավորել ուղարկողից ստացված վճարման հանձնարարականը (օրինակ՝ ուղարկողի միջոցները (հաշվի մնացորդը) բավական չեն տվյալ վճարման հանձնարարականը կատարելու համար, և բանկն օվերդրաֆտ չի տրամադրում): Նման դեպքերում նա մերժում է վճարման հանձնարարականը և այդ մասին պարտադիր տեղեկացնում (ուղարկողի հետ նախօրոք համաձայնեցված եղանակով՝ բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) ուղարկողին՝ նշելով մերժման պատճառը, որպեսզի ուղարկողին հնարավորություն տրվի միջոցների փոխանցումն այլընտրանքային եղանակներով իրականացնել: Մերժման մասին տեղեկացումը բանկի կողմից պետք է ուղարկվի այնպիսի եղանակով, որպեսզի կանխվի տվյալ վճարման հանձնարարականի ակցեպտավորումը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2, ենթակետեր բ և գ): Հակառակ դեպքում վճարման հանձնարարականը ակցեպտավորվում է և այլևս չի կարող մերժվել («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 5): Ցանկացած դեպքում վճարման հանձնարարականը մերժված է համարվում ուղարկողի կողմից մերժման մասին տեղեկացումն ստանալու պահից («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 1):

Բոլոր այն դեպքերում, երբ վճարման հանձնարարականի կատարման օրվա դրությամբ ստացող բանկում ուղարկողի հաշվի մնացորդը բավարար է եղել տվյալ վճարման հանձնարարականը կատարելու համար («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 2, ենթակետ ա), և վճարման հանձնարարականը չի մերժվել մինչև կատարման օրվա ավարտը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 2, ենթակետ բ), և ստացող բանկի կողմից ուղարկողի տվյալ հաշվի մնացորդի վրա տոկոսներ չեն հաշվարկվում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 2, ենթակետ գ), ապա ստացող բանկը (բացի շահառուի բանկից) ուղարկողի վճարման հանձնարարականը չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար պարտավոր է ուղարկողին վճարման հանձնարարականի գումարի դիմաց «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ով նախատեսված չափով տոկոսներ վճարել կատարման օրվանից մինչև վճարման հանձնարարականը մերժելու օրը ներառյալ: Սակայն եթե ուղարկողն օգտագործել է իր հաշվին առկա միջոցները կատարման օրվանից մինչև ուղարկողի կողմից վճարման հանձնարարականը մերժելու տեղեկացումն ստանալու օրը ներառյալ (ուղարկողի հաշվի մնացորդը նվազել է), ապա «ստացող բանկի կողմից այդ ժամանակահատվածի համար վճարվող տոկոսագումարը համապատասխանորեն նվազեցվում է» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 2):

Բոլոր չակցեպտավորված վճարման հանձնարարականները մերժված են համարվում այն պահից, երբ.

1. «ստացող բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչվել, եթե տվյալ բանկը շահառուն չէ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 3, ենթակետ ա), կամ

2. ստացող բանկի նկատմամբ սկսվել է սնանկացման վարույթ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 3, ենթակետ բ), կամ
3. «ստացող բանկը դադարեցնում կամ հրաժարվում է վճարումներ կատարել, կամ այդ մասին տեղեկացնում է ուղարկողին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 3, ենթակետ գ):

«Վճարման հանձնարարականի մերժումը բացառում է դրա հետագա ակցեպտավորումը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 4): Դա նշանակում է, որ ստացող բանկը չի կարող ակցեպտավորել այն վճարման հանձնարարականները, որոնք նա արդեն մերժել է, քանի որ մերժման մասին տեղեկացումն ստանալուն պես ուղարկողը կարող է նախաձեռնել միջոցների փոխանցումը այլ՝ այլընտրանքային (ալտերնատիվ) եղանակով: Նման դեպքերում վճարման հանձնարարականի ակցեպտավորումը դրա մերժումից հետո կարող է հանգեցնել նույն գումարի կրկնակի փոխանցման: Այդ իսկ պատճառով այն դեպքերում, երբ ստացող բանկը, այնուամենայնիվ, ուզում է ակցեպտավորել նախկինում իր իսկ կողմից մերժված վճարման հանձնարարականը, նա պարտավոր է ստանալ ուղարկողի համաձայնությունը դա կատարելու համար: Այդ դեպքում ուղարկողի համաձայնությունը կկայանա իր կողմից կրկին նույն հանձնարարականի ներկայացման մեջ:

Վճարման հանձնարարականը չեղյալ համարելը:
Չեղյալ համարելու հանձնարարականի ակցեպտավորելը

Ուղարկողն այս կամ այն պատճառներով, օրինակ, երբ տրված վճարման հանձնարարականը սխալ է պարունակում կամ սխալմամբ ուղարկվել է նախկինում ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակը, կարող է ուղղել սխալը՝ չեղյալ համարելով իր իսկ կողմից ստացող բանկին տրված վճարման հանձնարարականը: Այդ դեպքերում նա կարող է վճարման հանձնարարականները չեղյալ համարելու հանձնարարականներն ստացող բանկին ուղարկել իր և ստացող բանկի միջև պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով սահմանված եղանակներով (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) և կարգով: Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը նույնպես պետք է ուղարկվի ստացող բանկի և ուղարկողի միջև փոխհամաձայնեցված անվտանգության արարողակարգով: Վճարման հանձնարարականի չեղյալ համարելը դրանում նշված գումարի փոխանցման դադարեցումն է՝ «ուղարկողին տվյալ գումարն անմիջապես վերադարձնելու պայմանով»: Վճարման հանձնարարականն ստացող բանկի կողմից չեղյալ համարվելու դեպքում տվյալ վճարման հանձնարարականի ակցեպտավորումը վերացվում է, իսկ «ակցեպտավորումից բխող միջոցների փոխանցման կողմերի իրավունքներն ու պարտականությունները դադարում են»: Ստացող բանկին վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական կարող է տալ ինքը՝ ուղարկողը, կամ դատարանը՝ իր որոշմամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 1): Եթե ստացող բանկի կողմից ուղարկողի վճարման հանձնարարականը դեռևս չի ակցեպտավորվել, չկա որևէ փաստարկ, որի հիման վրա ստացող բանկը կարող է մերժել ուղարկողի կողմից տրված տվյալ վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը:

Պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով կարող են սահմանվել նաև վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի վավերապայմանները («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 2):

Այն դեպքում, երբ ստացող բանկն ակցեպտավորում է վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը, նա ստանձնում է վճարման հանձնարարականը չեղյալ համարելու պարտավորություն: «Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ակցեպտավորումը բացառում է տվյալ վճարման հանձնարարականի հետագա ակցեպտավորումը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 3), քանի որ ուղարկողը, չեղյալ համարելու հանձնարարականի ակցեպտավորման մասին տեղեկանալով, կարող է ուղարկել բանկին նոր վճարման հանձնարարական: Նման դեպքերում վճարման հանձնարարականի ակցեպտավորումը դրա չեղյալ համարելու հանձնարարականի ակցեպտավորումից հետո կհանգեցնի նույն գումարի կրկնակի փոխանցմանը: Այդ իսկ պատճառով այն դեպքերում, երբ ստացող բանկն, այնուամենայնիվ, ուզում է ակցեպտավորել նախկինում իր իսկ կողմից չեղյալ համարված վճարման հանձնարարականը, նա պարտավոր է ստանալ ուղարկողի համաձայնությունը դա կատարելու համար: Այդ դեպքում ուղարկողի համաձայնությունը կկայանա իր կողմից կրկին վճարման հանձնարարականի ներկայացման մեջ:

Այն դեպքում, երբ վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականն ստացվել է այնպիսի եղանակով և ժամկետում, որ ստացող բանկը հնարավորություն ունի «համապատասխան գործողություն ձեռնարկել» մինչև տվյալ վճարման հանձնարարականն ակցեպտավորելը, և վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը համապատասխանում է «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի կետ 2-ի դրույթներին, այն ենթակա է ակցեպտավորման («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 4):

Եթե ուղարկողի կողմից ստացող բանկին տրվում է չեղյալ համարելու հանձնարարական, որը չեղյալ է համարում արդեն իսկ ակցեպտավորված հանձնարարականը, ապա տվյալ չեղյալ համարելու հանձնարարականը ենթակա է ակցեպտավորման միայն այն դեպքերում, երբ.

1. ստացող բանկը համաձայն է այն ակցեպտավորելու, կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոնները թույլ են տալիս այն իրականացնել «առանց ստացող բանկի համաձայնության» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 5) և ստացող բանկի կողմից (բացի շահառուի բանկը), ի կատարումն ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի, «համապատասխանորեն ուղարկված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը հաջորդ ստացող բանկի կողմից» ակցեպտավորված է («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 6).
2. ստացող բանկը շահառուի բանկ լինելու դեպքում՝ բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը տրվել է բանկին՝ չեղյալ համարելու շահառուի բանկի կողմից ակցեպտավորված այն վճարման հանձնարարականը, որը «չի ուղարկվել դրանում որպես ուղարկող նշված անձի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից կամ սխալմամբ ուղարկվել է և նախկինում ուղարկված վճարման հանձնարարականի

կրկնօրինակ է, կամ պարունակում է հանձնարարություն՝ վճարում իրականացնելու սխալմամբ նշված գումարն ստանալու իրավունք չունեցող շահառուի, կամ պարունակում է նշում ավելի մեծ գումարի, քան «շահառուն իրավունք ունի ստանալ վճարողից» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 7):

Շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու դեպքում շահառուից գումարը օրենքով սահմանված կարգով հետ պահանջելու իրավունքն ունի շահառուի բանկը:

Ցանկացած վճարման հանձնարարական, որը ո՛չ ակցեպտավորված է, ո՛չ մերժված, վճարման հանձնարարականում նշված կատարման կամ վճարման օրվանից հետո «հինգերորդ գործառնական օրվա ավարտի պահին» չեղյալ է համարվում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 8):

Եթե ստացող բանկն ակցեպտավորել է նախկինում իր կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը, ապա ուղարկողը «պարտավոր է հատուցել վճարման հանձնարարականը չեղյալ համարելու կամ դրա փորձի հետևանքով ստացող բանկին պատճառած վնասները և նրա կատարած ծախսերը, եթե պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով այլ բան նախատեսված չէ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 9):

Այն դեպքում, երբ ստացող բանկը վճարման հանձնարարականն ակցեպտավորելուց առաջ իմացել է «ուղարկողի մահվան, նրան անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, նրա վերակազմավորման կամ լուծարման» մասին և «անհրաժեշտ գործողություն ձեռնարկելու հնարավորություն է ունեցել», ուղարկողի վճարման հանձնարարականն ուժը կորցնում է («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 17, կետ 10):

Ցանկացած պայմանագիր կամ միջոցների փոխանցումների կանոններ «գործում են այնքանով, որքանով չեն հակասում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 7 մասին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 17 կետ 11):

Վճարման հանձնարարականն ակցեպտավորելու ստացող բանկի պարտավորությունը

Ստացող բանկն ուղարկողի հետ սպասարկման պայմանագիր կնքելիս (պայմանագրում) կարող է նախատեսել, կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններում կարող են նախատեսվել դրույթներ վճարման հանձնարարականների պարտադիր ակցեպտավորման վերաբերյալ: Եթե նման պարտավորություն սահմանված չէ, ապա ստացող բանկը պարտավոր չէ ակցեպտավորել վճարման հանձնարարականը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, կետ 1):

Բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումից բխող պատասխանատվության սահմանները և չափը «սահմանվում են սույն օրենքով, եթե պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով այլ բան սահմանված չէ»: Սակայն «բանկերի «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվությունը չի կարող մեղմացվել պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով»

(«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, կետ 2):

«Ստացող բանկն ակցեպտավորված վճարման հանձնարարականն ուղարկողի կամ դրանում նշված շահառուի ներկայացուցիչը (գործակալը) չէ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, կետ 3):

ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՈՂԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Վճարման հանձնարարականի կատարումը և կատարման օրը

Միջոցների փոխանցման մասնակից հանդիսացող բոլոր ստացող բանկերի կողմից (վճարողի բանկ, միջնորդ բանկեր, բացառությամբ շահառուի բանկի) ստացված վճարման հանձնարարականները կատարված են համարվում, երբ տվյալ բանկը, ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի, իր հերթին վճարման հանձնարարական է ուղարկում տվյալ միջոցների փոխանցման հաջորդ օղակին: Շահառուի բանկն ստացված վճարման հանձնարարականն ակցեպտավորում է («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, կետ 2), բայց չի կատարում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, կետ 1): Ստացող բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականը կատարված է համարվում անգամ այն դեպքում, երբ ստացող բանկը սխալ է թույլ տվել այն կատարելիս, օրինակ՝ իր ուղարկած վճարման հանձնարարականը սխալ շահառուի է հասցեագրել, սխալ գումարով, սխալ շահառուի բանկին և այլն: Այնուամենայնիվ, այդ դեպքերում վճարման հանձնարարականը նույնպես կատարված է համարվում, սակայն սխալ կատարված:

Ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում կարող է նախատեսվել «կատարման օր»՝ այն օրը, երբ ստացող բանկը պարտավոր է կատարել իր կողմից ստացված վճարման հանձնարարականը: Կատարման օրը կարող է սահմանվել նաև ուղարկողի կողմից ստացող բանկին տրված առանձին հանձնարարությամբ կամ ստացող բանկի և ուղարկողի միջև կնքված պայմանագրով և «չի կարող նախորդել տվյալ վճարման հանձնարարականի ստացման օրվան»: Սակայն երբ ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում չի նշվում «կատարման օրը», ապա այդ դեպքերում վճարման հանձնարարականի «կատարման օր» է համարվում ստացող բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը (եթե վճարման հանձնարարականն ստացող բանկի կողմից ստացվում է իր գործառնական օրվա ընթացքում) կամ «դրան անմիջապես հաջորդող այն օրը, երբ ստացող բանկը վճարման հանձնարարականներ է ուղարկում կամ կարող էր ուղարկել՝ ի կատարումն» իր կողմից ստացված վճարման հանձնարարականի (եթե ստացող բանկը վճարման հանձնարարականն ստանում է իր գործառնական օրվա ավարտից հետո և համաձայն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի կետ 2-ի՝ հանձնարարականը ստացված է համարվում հաջորդ գործառնական օրվա սկզբին) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, կետ 2):

Այն դեպքերում, երբ ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականում նշված է միայն «վճարման օրը», ապա եթե ստացող բանկը շահառուի բանկն է՝ վճարման օրը նաև կատարման օրն է, մնացած դեպքերում (երբ ստացող բանկը շահառուի բանկը չէ) կատարման օրը ստացող բանկի «գործառնական այն օրն է, երբ ստացող բանկի կողմից համապատասխան վճարման հանձնարարականի ուղարկումն» կապահովվի,

որպեսզի շահառուի բանկի կողմից վճարումը շահառուին կատարվի վճարման հանձնարարականում նշված վճարման օրը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 19, կետ 2):

Օրինակ 1. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 10:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված չէ ո՛չ կատարման օրը, ո՛չ վճարման օրը, և այն ներկայացվել է բանկին նրա գործառնական օրվա ընթացքում: A բանկի համար կատարման օր է համարվում վճարման հանձնարարականը բանկին ներկայացման օրը՝ 25.09.1999 թ.: A բանկը պարտավոր է տվյալ օրը վճարման հանձնարարական ուղարկել B բանկին՝ ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի: Քանի որ վճարման հանձնարարականում նշված չէ նաև վճարման օրը, ապա վճարման օր է համարվելու B բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ընթացքում ստանալու դեպքում, կամ ստացման օրվանը հաջորդող գործառնական օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ավարտից հետո ստանալու դեպքում:

Օրինակ 2. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 17:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նորից նշված չէ ո՛չ կատարման օրը, ո՛չ վճարման օրը, սակայն այն ներկայացվել է բանկին նրա գործառնական օրվա ավարտից հետո: A բանկի համար կատարման օր է համարվում վճարման հանձնարարականը բանկին ներկայացնելու օրվան՝ 25.09.1999 թ. անմիջապես հաջորդող գործառնական օրը: A բանկը պարտավոր է տվյալ օրը վճարման հանձնարարական ուղարկել B բանկին՝ ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի: Քանի որ վճարման հանձնարարականում նշված չէ նաև վճարման օրը, ապա վճարման օր է համարվելու B բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ընթացքում ստանալու դեպքում, կամ ստացման օրվան հաջորդող գործառնական օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ավարտից հետո ստանալու դեպքում:

Օրինակ 3. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 10:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Վճարման հանձնարարականում որպես կատարման օր է նշված 27.09.1999 թ.: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նորից նշված է կատարման օրը, սակայն նշված չէ վճարման օրը: A բանկի համար կատարման օր է համարվում 27.09.1999 թ.: A բանկը պարտավոր է տվյալ օրը վճարման հանձնարարական ուղարկել B բանկին՝ ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի: Քանի որ վճարման հանձնարարականում նշված չէ վճարման օրը, ապա վճարման օր է համարվելու B բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ընթացքում ստանալու դեպքում, կամ ստացման օրվան հաջորդող գործառնական օրը՝ վճարման հանձնարարականը բանկի գործառնական օրվա ավարտից հետո ստանալու դեպքում:

Օրինակ 4. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 17:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Վճարման հանձնարարականում որպես կատարման օր է նշված 25.09.1999 թ.: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նորից նշված է կատարման օրը, սակայն նշված չէ վճարման օրը: Քանի որ վճարման հանձնարարականն ստացվել է A բանկի կողմից իր գործառնական օրվա ավարտից հետո, այն ստացված է համարվում հաջորդ գործառնական օրվա սկզբին՝ 26.09.1999 թ.: Իսկ հաշվի առնելով այն փաստը, որ ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված կատարման օրը նախորդում է վճարման հանձնարարականի ստացման օրվան՝ 26.09.1999 թ., ինչը համաձայն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի կետ 2-ի՝ անթույլատրելի է, A բանկը պարտավոր է մերժել իրեն ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը:

Օրինակ 5. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 10:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Վճարման հանձնարարականում որպես վճարման օր է նշված 30.09.1999 թ.: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված չէ կատարման օրը, սակայն նշված է վճարման օրը: A բանկի համար կատարման օր է համարվում գործառնական այն օրը, որ A բանկի կողմից ուղարկողի վճարման հանձնարարականի ուղարկումն ապահովի շահառուի բանկի կողմից վճարման օրը՝ 30.09.1999 թ., գումարի վճարումը շահառուին: Քանի որ վճարման հանձնարարականում որպես վճարման օր նշված է 30.09.1999 թ., ապա տվյալ օրը շահառուի բանկը պարտավոր է գումարը հասանելի դարձնել շահառուին:

Օրինակ 6. Ուղարկողը 25.09.1999 թ. ժամը 10:00-ին (A բանկի գործառնական օրվա ժամերն են՝ 9:30-ից մինչև 14:00) վճարման հանձնարարական է ներկայացնում A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: Վճարման հանձնարարականում որպես կատարման օր է նշված 27.09.1999 թ., իսկ որպես վճարման օր՝ 30.09.1999 թ.: Այս դեպքում ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված է և՛ կատարման օրը, և՛ վճարման օրը: A բանկի համար կատարման օր է համարվում 27.09.1999 թ.: A բանկը պարտավոր է տվյալ օրը վճարման հանձնարարական ուղարկել B բանկին՝ ի կատարումն իր կողմից ստացված վճարման հանձնարարականի: Քանի որ վճարման հանձնարարականում նշված է նաև վճարման օրը՝ 30.09.1999 թ., ապա B բանկը, ստանալով վճարման հանձնարարականը A բանկից (անգամ եթե ստանա մինչև 30.09.1999 թ.), պարտավոր է գումարը հասանելի դարձնել շահառուին վճարման հանձնարարականում նշված վճարման օրը՝ 30.09.1999 թ.:

Ստացող բանկի պարտավորությունները վճարման հանձնարարականը կատարելիս

Ստացող բանկը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի համաձայն՝ վճարման հանձնարարականն ակցեպտավորելիս պարտավոր է համապատասխան գործողություններ կատարել, որպեսզի ապահովի ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի պատշաճ կատարումը: Դա իրականացնելու համար նա պարտավոր է.

1. «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ով սահմանված կարգով ուղարկողի կողմից իրեն ներկայացված վճարման հանձնարարականի կատարման նպատակով, ուղարկողի կողմից ընտրված եղանակով կամ «նույնչափ արագ եղանակով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 3), կատարման օրվա ընթացքում ուղարկել միջոցների փոխանցումների համակարգով և միջնորդ բանկերի միջոցով տրված հանձնարարականին համապատասխանող նոր վճարման հանձնարարական («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 1, ենթակետ ա): Բավականին հաճախ ուղարկողի համար վճարման հանձնարարականի կատարման արագությունը կարևոր դեր է խաղում: Այդ դեպքերում նա վճարման հանձնարարականում նշում է միջոցների փոխանցման եղանակը և համակարգը: Որպես կանոն՝ ստացող բանկը հետևում է ուղարկողի կողմից տրված հանձնարարականին՝ եղանակի և համակարգի կիրառման մասով, սակայն երբեմն կարող է հնարավոր չլինել օգտագործել նշված եղանակը կամ համակարգը, օրինակ՝ միջբանկային համակարգչային ցանցի ժամանակավոր խափանման դեպքում ստացող բանկին հնարավորություն է տրվում ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականը կատարելու նպատակով օգտագործել միջոցների փոխանցման այլընտրանքային եղանակ կամ համակարգ: Դա չի վերաբերում միջնորդ բանկի ընտրությանը: Եթե ուղարկողը նշել է կոնկրետ միջնորդ բանկ, ապա ստացող բանկը միջոցների փոխանցումը պետք է իրականացնի միայն նշված միջնորդ բանկի միջոցով: Այնուամենայնիվ, ստացող բանկը կարող է ինքնուրույն ընտրել միջնորդ բանկ, որն իր հերթին հանձնարարականն ուղարկելու է ուղարկողի կողմից նշված միջնորդ բանկին, միայն այն դեպքում, երբ ստացող բանկը չունի թղթակցային հարաբերություններ ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված միջնորդ բանկի հետ:
2. Եթե ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նախատեսված չէ կոնկրետ եղանակ, սակայն ուղարկողը հանձնարարել է հանձնարարականն ուղարկել ամենաարագ եղանակով, վճարման հանձնարարականն ուղարկել «իր համար հնարավոր արագ եղանակով»: Նույն պարագայում, եթե ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված է նաև վճարման օր, և նշված չէ կատարման օր, ապա այդ դեպքում ստացող բանկը վճարման հանձնարարական է ուղարկում այնպիսի եղանակով և ժամկետում, «որոնք անհրաժեշտ են՝ շահառուին վճարման օրը (շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը մինչև վճարման օրվա գործառնական ժամերի ավարտն ստանալու դեպքում) կամ դրանից հետո հնարավոր կարճ ժամկետում (շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը վճարման օրը գործառնական ժամերի ավարտից հետո ստանալու դեպքում) վճարումն ապահովելու համար» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 1, ենթակետ բ):

Եթե ուղարկողի կողմից վճարման հանձնարարականում նշված և նախատեսված չեն միջոցների փոխանցման եղանակ, համակարգ և միջնորդ բանկեր, ապա ստացող բանկը, «գործելով բարեխղճորեն», կարող է հանձնարարականը կատարելիս ինքնուրույն ընտրել միջոցների փոխանցման եղանակը, համակարգը և/կամ միջնորդ բանկերը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 2):

Ստացող բանկն ուղարկողի վճարման հանձնարարականը կատարելու դիմաց հատուցումը կարող է ստանալ տարբեր եղանակներով՝ կանխիկ եղանակով, ուղարկողի կողմից տրված առանձին հանձնարարականի հիման վրա ուղարկողի հաշվից գումարը գանձելով կամ, որոշ դեպքերում, «ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի գումարի հաշվին»: Ստացող բանկն իրավունք չունի առանց ուղարկողի համաձայնության հանձնարարականի կատարման դիմաց հատուցումն ստանալ ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի գումարի հաշվին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 4): Եթե ուղարկողը թույլ չի տվել ստացող բանկին հատուցումն ստանալ վճարման հանձնարարականում նշված գումարից, ապա ստացող բանկն ի կատարումն ուղարկողի վճարման հանձնարարականի՝ իր հերթին միջոցների փոխանցման հաջորդ օրվանից վճարման հանձնարարական ուղարկելիս պարտավոր է պահանջել՝ տրամադրված ծառայության դիմաց վճարի գանձումը չիրականացնել վճարման հանձնարարականում նշված գումարից:

Վճարման հանձնարարականի սխալ կատարումը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով սահմանվում են այն դեպքերը, երբ ստացող բանկը սխալ է թույլ տալիս ուղարկողի կողմից իրեն ներկայացված վճարման հանձնարարականը կատարելիս: Ստացող բանկը կարող է փոխանցել ավելի մեծ կամ փոքր գումար, քան նախատեսված էր ուղարկողի կողմից կամ փոխանցել այլ շահառուին, որը նախատեսված չէր փոխանցել ուղարկողի կողմից և այլն:

Այն դեպքում, երբ ստացող բանկն ավելի մեծ գումար է փոխանցել, քան նախատեսված էր ուղարկողի կողմից կամ մի քանի անգամ միևնույն գումարի վճարման հանձնարարական է ուղարկել (ինչը նույնն է, ինչ որ ավելի մեծ գումարի վճարման հանձնարարական ուղարկելը, քանի որ ուղարկողի հաշիվը դեբետագրվել է ավելի մեծ գումարի), ուղարկողը պարտավոր է ստացող բանկին վճարել «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի կետ 2-ի համաձայն միայն իր կողմից ստացող բանկին ներկայացված վճարման հանձնարարականում նշված գումարը, և ստացող բանկը պարտավոր է ուղարկողին վերադարձնել ավել փոխանցված գումարը: Ստացող բանկն իրավունք ունի շահառուից պահանջել «սխալ վճարման հանձնարարականով ստացված գումարի և ուղարկողի վճարման հանձնարարականի գումարի տարբերությունը՝ օրենքով սահմանված կարգով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 21, կետ 1):

Օրինակ 1. Ուղարկողը A բանկին վճարման հանձնարարական է ներկայացրել՝ հանձնարարելով նրան 1.000.000 դրամ փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը, կատարելով իրեն ներկայացված վճարման հանձնարարականը, դեբետագրել է ուղարկողի հաշիվը 10.000.000 դրամ գումարի չափով և իր հերթին այն փոխանցել շահառուին: Այս դեպքում A բանկը սխալ է թույլ տվել՝ 9.000.000 դրամ ավել փոխանցելով շահառուին: A բանկը պարտավոր է 9.000.000 դրամ գումարը վերադարձնել ուղարկողին և իրավունք ունի օրենքով սահմանված կարգով շահառուից հետ պահանջելու ավել վճարված 9.000.000 դրամ գումարը:

Օրինակ 2. Ուղարկողը A բանկին վճարման հանձնարարական է ներկայացրել՝ հանձնարարելով նրան 1.000.000 դրամ փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը, կատարելով իրեն ներկայացված վճարման հանձնարարականը, երկու անգամ է դեբետագրել ուղարկողի հաշիվը՝ յուրաքանչյուր անգամ 1.000.000 դրամ գումարի չափով, և իր հերթին երկու անգամ 1.000.000-ական դրամի գումար փոխանցել շահառուին: Այս դեպքում A բանկը սխալ է թույլ տվել՝ 1.000.000 դրամ ավել փոխանցելով շահառուին: A բանկը պարտավոր է 1.000.000 դրամ գումարը վերադարձնել ուղարկողին և իրավունք ունի՝ օրենքով սահմանված կարգով շահառուից հետ պահանջել ավել վճարված 1.000.000 դրամ գումարը:

Այն դեպքում, երբ ստացող բանկն ավելի փոքր գումար է փոխանցել, քան նախատեսված էր ուղարկողի կողմից, ուղարկողը պարտավոր է ստացող բանկին վճարել ուղարկողի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում նշված գումարը, եթե ստացող բանկն ուղղի սխալը՝ «ուղարկողի վճարման հանձնարարականում նշված շահառուի օգտին լրացուցիչ վճարման հանձնարարական ուղարկելով» պակաս գումարի չափով: Հակառակ դեպքում ուղարկողը պարտավոր է ստացող բանկին վճարել միայն ստացող բանկի կողմից շահառուին ուղարկված վճարման հանձնարարականում նշված գումարի չափով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ շահառուին ավելի փոքր գումար փոխանցելը հետևանք է ուղարկողի վճարման հանձնարարականի գումարից, ուղարկողի պարտադիր համաձայնությամբ (հրահանգի համաձայն), տրամադրված ծառայության կամ ծախսերի դիմաց ստացող բանկի կողմից հատուցման ստացման («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 21, կետ 2):

Օրինակ 3. Ուղարկողը A բանկին վճարման հանձնարարական է ներկայացրել՝ հանձնարարելով նրան 1.000.000 դրամ փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը, կատարելով իրեն ներկայացված վճարման հանձնարարականը, դեբետագրել է ուղարկողի հաշիվը 1.000.000 դրամի չափով, սակայն շահառուին է փոխանցել 100.000 դրամ: Այս դեպքում A բանկը սխալ է թույլ տվել՝ 900.000 դրամ պակաս փոխանցելով շահառուին, և նա պարտավոր է ուղղել սխալը՝ 900.000 դրամ պակաս գումարը փոխանցելով շահառուին: Եթե նա չի ուղղում սխալը, ապա պարտավոր է վերադարձնել ուղարկողին 900.000 դրամ գումարը:

Օրինակ 4. Ուղարկողը A բանկին վճարման հանձնարարական է ներկայացրել՝ հանձնարարելով նրան 1.000.000 դրամ փոխանցել B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը, կատարելով իրեն ներկայացված վճարման հանձնարարականը, դեբետագրել է ուղարկողի հաշիվը 1.000.000 դրամի չափով, սակայն շահառուին է փոխանցել 999.900 դրամ՝ 100 դրամը ուղարկողի կողմից առանձին տրված հրահանգի համաձայն վերցնելով որպես հատուցում: Այս դեպքում A բանկը սխալ թույլ չի տվել:

Այն դեպքում, երբ ստացող բանկը, ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականը կատարելով, միջոցները փոխանցում է այլ շահառուին, քան նախատեսված էր ուղարկողի կողմից, և միջոցների փոխանցումն ավարտվում է սխալ վճարման հանձնարարականով, ապա ո՛չ տվյալ ստացող բանկին վճարման հանձնարարական ուղարկողը, ո՛չ նրան նախորդող ուղարկողները պարտավոր չեն վճարել իրենց ուղարկած վճարման հանձնարարականի գումարը: Սխալ թույլ տված ստացող բանկն իրավունք ունի իր վճարման հանձնարարականում նշված շահառուից հետ պահանջել վճարված գումարը՝ օրենքով սահմանված կարգով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 21, կետ 3):

Օրինակ 5. X ուղարկողը վճարման հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել B բանկի միջոցով C բանկի հաճախորդ հանդիսացող Y շահառուին: A բանկը ճիշտ կատարում է X ուղարկողի կողմից տրված հանձնարարականը՝ իր հերթին վճարման հանձնարարական ուղարկելով B բանկին և հանձնարարելով 1.000.000 դրամ փոխանցել C բանկի հաճախորդ հանդիսացող Y շահառուին: B բանկը սխալ է թույլ տալիս A բանկի կողմից տրված վճարման հանձնարարականը կատարելիս և վճարման հանձնարարական է ուղարկում C բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ վճարել ոչ թե Y շահառուին, այլ՝ Z: Շահառուի բանկը, ստանալով B բանկի կողմից տրված վճարման հանձնարարականը, ակցեպտավորում է այն և 1.000.000 դրամ գումարը տրամադրում Z-ին: Այս դեպքում ո՛չ A բանկը, ո՛չ X ուղարկողը պարտավոր չեն վճարել 1.000.000 դրամ գումարը, քանի որ միջոցների փոխանցումն ավարտվել է սխալ շահառուին գումարի տրամադրմամբ: B բանկն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով Z-ից պահանջել նրան սխալմամբ վճարված գումարը և՝ ա) կամ A բանկի համաձայնության դեպքում ուղղել սխալը՝ այն փոխանցելով ճիշտ շահառուին կամ բ) վերադարձնել գումարը A բանկին, որն իր հերթին կվերադարձնի այն X-ին:

Վճարման հանձնարարականի սխալ կատարման մասին ուղարկողի հայտնելու պարտավորությունը

Որպես կանոն՝ ստացող բանկը, կատարելով ուղարկողի կողմից իրեն տրված վճարման հանձնարարականները, տեղեկացնում է այդ մասին (վճարման հանձնարարականն ակցեպտավորելու կամ ուղարկողի հաշիվը դեբետագրելու մասին) ուղարկողին նրա հետ նախապես փոխհամաձայնեցված եղանակով (բանավոր՝ անմիջականորեն, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաշվից քաղվածքների կամ հաշվի մնացորդի մասին տեղեկանքներ տրամադրելով): Ուղարկողը, յուրաքանչյուր անգամ տեղեկացում ստանալով, պարտավոր է համեմատել իր կողմից տրված վճարման հանձնարարականի տվյալները ստացող բանկի կողմից կատարվածի հետ և սխալի բացահայտման դեպքում «հնարավոր կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերոհիշյալ տեղեկացումն ստանալու պահից վաթսուն օրվա ընթացքում» այդ մասին հայտնել ստացող բանկին: «Հակառակ դեպքում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի կետ 3-ի համաձայն՝ ուղարկողը մինչև ստացող բանկի կողմից իր սխալը հայտնաբերելու պահը զրկվում է իրեն վերադարձման ենթակա գումարի վրա հաշվարկվող տոկոսներն ստանալու իրավունքից», և ստացող բանկն իրավունք չունի ուղարկողից հատուցում պահանջել, եթե ուղարկողը չկատարի կամ ոչ պատշաճ կերպով կատարի վերը նշված իր պարտականությունը:

Պատասխանատվությունը վճարման հանձնարարականը չկատարելու
կամ ոչ պատշաճ կատարելու համար

Այն դեպքում, երբ ստացող բանկը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ով չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում (սխալ է թույլ տալիս) իր վճարման պարտավորությունը, և դրա հետևանքով ուշացվում է շահառուին կատարվելիք վճարումը, ստացող բանկը պարտավոր է տվյալ միջոցների փոխանցման վճարողին կամ շահառուին ուշացված գումարի դիմաց «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ով սահմանված չափով տոկոսներ վճարել («Վճարման հանձնարարականով

միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, կետ 1): Որպես կանոն՝ ընդունված է, որ նմանատիպ դեպքերում ստացող բանկը տոկոսները վճարում է շահառուի բանկին, որն իր հերթին տրամադրում է այդ գումարը շահառուին:

Այն դեպքում, երբ ստացող բանկը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ով չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում (սխալ է թույլ տալիս) իր վճարման պարտավորությունը, և դրա հետևանքով «փոխանցումը չի ավարտվել կամ չի կատարվել ուղարկողի կողմից նշված միջնորդ բանկերի միջոցով», ապա ստացող բանկը պարտավոր է հատուցել դրա հետևանքով վճարողին պատճառած բոլոր վնասներն «այն չափով, որքանով դրանք չեն հատուցվել» «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի կետ 1-ով սահմանված տոկոսների վճարմամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, կետ 2), ինչպես նաև իրեն տվյալ վճարման հանձնարարականը տրամադրած ուղարկողի վնասները, «այդ թվում՝ ուղարկողի կատարած բոլոր ծախսերը, ներառյալ իրավաբանական ծառայության վարձատրության գումարը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, կետ 3):

Ստացող բանկը պարտավոր է հատուցել իրեն վճարման հանձնարարական տամադրած ուղարկողի վնասները՝ «ներառյալ իրավաբանական ծառայության վարձատրության գումարը» նաև այն դեպքում, երբ նա պայմանագրով պարտավորվել է ակցեպտավորել, սակայն չի ակցեպտավորում իրեն ներկայացված վճարման հանձնարարականը «պայմանագրում վճարման հանձնարարականի մերժման կամ չակցեպտավորման հիմքերի բացակայության պարագայում» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, կետ 4):

«««Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածով նախատեսված ստացող բանկի պատասխանատվությունը պայմանագրով կամ համակարգի կանոններով խստացվել չի կարող» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, կետ 5):

ՎՃԱՐՈՒՄԸ

Վճարման հանձնարարականի վճարման օրը

Վճարողն ստացող բանկին ներկայացված վճարման հանձնարարականում կարող է սահմանել այն օրը (գործառնական օրը), «երբ վճարման հանձնարարականի գումարը ենթակա է վճարման շահառուին՝ շահառուի բանկի կողմից»: Այդ գործառնական օրը կոչվում է «վճարման հանձնարարականի վճարման օր»:

Վճարողը, վճարման հանձնարարականում վճարման օր նշելիս, պետք է ընտրի այնպիսի օր, որ ստացող բանկը հնարավորություն ունենա իր տրամադրության տակ գտնվող եղանակներից որևէ մեկով այնպես կատարել վճարումը, որն իր հերթին հնարավորություն տա շահառուի բանկին՝ նշված վճարման օրը գումարը հասանելի դարձնելու շահառուին, ինչը նշանակում է, որ ցանկացած դեպքում վճարման օրը «չի կարող նախորդել շահառուի բանկի կողմից տվյալ վճարման հանձնարարականի ստացման օրվան»: Հակառակ դեպքում ստացող բանկը կարող է հրաժարվել վճարողի վճարման հանձնարարականը կատարելուց և մերժել այն:

Վճարման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարման հանձնարարականների համար սահմանված վավերապայմանների շարքում ոչ պարտադիր լրացման դաշտ է, այդ իսկ պատճառով այն վճարողի կողմից վճարման

հանձնարարականում նշված չլինելու դեպքում՝ «այդպիսինն է համարվում շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը»:

Օրինակ 1. Վճարողը 28.09.1999 թ. վճարման հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող A բանկին, որը գործում է Վանաձորում՝ հանձնարարելով 28.09.1999 թ. (վճարման օր) վճարում իրականացնել Մեղրի քաղաքում գործող B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա ի վիճակի չէ անգամ էլեկտրոնային վճարումների համակարգով կատարել վճարման հանձնարարականն այնպես, որ B բանկին հնարավորություն ընձեռվի 28.09.1999 թ. վճարման հանձնարարականում նշված գումարը հասանելի դարձնել շահառուին, մերժում է վճարողի կողմից իրեն ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը:

Օրինակ 2. Վճարողը 28.09.1999 թ. վճարման հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող A բանկին, որը գործում է Վանաձորում՝ հանձնարարելով 05.10.1999 թ. (վճարման օր) վճարում իրականացնել Մեղրի քաղաքում գործող B բանկում սպասարկվող շահառուին: A բանկը կատարում է վճարման հանձնարարականն այնպիսի եղանակով, որ B բանկին հնարավորություն ընձեռվի 05.10.1999 թ. վճարման հանձնարարականում նշված գումարը հասանելի դարձնել շահառուին: B բանկը, անգամ եթե ստանա վճարման հանձնարարականը 03.10.1999 թ., պարտավոր է վճարման հանձնարարականում նշված գումարը շահառուին հասանելի դարձնել 05.10.1999 թ.:

Օրինակ 3. Վճարողը 28.09.1999 թ. վճարման հանձնարարական է ներկայացնում իրեն սպասարկող A բանկին, որը գործում է Վանաձորում՝ հանձնարարելով վճարում իրականացնել Մեղրի քաղաքում գործող B բանկում սպասարկվող շահառուին՝ չնշելով վճարման օրը: A բանկը կատարում է վճարման հանձնարարականը վճարողի կողմից հանձնարարված եղանակով: Եթե B բանկը ստանա վճարման հանձնարարականը 03.10.1999 թ., նա պարտավոր է այդ օրը վճարման հանձնարարականում նշված գումարը հասանելի դարձնել շահառուին:

Ստացող բանկին վճարելու ուղարկողի պարտավորությունը

Այն պահին, երբ ստանալով ուղարկողի կողմից ուղարկված վճարման հանձնարարականը, շահառուի բանկն ակցեպտավորում է այն, ուղարկողը շահառուի բանկին վճարման հանձնարարականում նշված գումարի չափով վճարելու պարտավորություն է ստանձնում: Եթե վճարման հանձնարարականում նշված է վճարման օր, ապա «ուղարկողը պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը մինչև վճարման օրը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 1):

Օրինակ 1. Ուղարկողը վճարման հանձնարարական է ուղղում շահառուի բանկին, որտեղ որպես վճարման օր նշված է 29.09.1999 թ.: Շահառուի բանկը ստանում է վճարման հանձնարարականը 28.09.1999 թ. և նույն օրը ակցեպտավորում է այն: Ուղարկողը վճարման պարտավորություն է ստանձնում՝ 29.09.1999 թ. վճարելու շահառուի բանկին վճարման հանձնարարականում նշված գումարը:

Այն պահին, երբ ստանալով ուղարկողի կողմից ուղարկված վճարման հանձնարարականը, շահառուի բանկից բացի այլ ստացող բանկ ակցեպտավորում է այն, ուղարկողը ստացող բանկին վճարման հանձնարարականում նշված գումարի չափով

վճարելու պարտավորություն է ստանձնում, «բացառությամբ սույն հոդվածի 4 և 22 կետերով նախատեսված դեպքերի»: Եթե վճարման հանձնարարականում նշված է կատարման օր, ապա «ուղարկողը պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը մինչև կատարման օրը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 2):

Օրինակ 2. Ուղարկողը վճարման հանձնարարական է ուղղում ստացող բանկին, որտեղ որպես կատարման օր է նշված 29.09.1999 թ.: Ստացող բանկը ստանում է վճարման հանձնարարականը 28.09.1999 թ. և նույն օրը ակցեպտավորում է այն: Ուղարկողը վճարման պարտավորություն է ստանձնում 29.09.1999 թ. վճարելու ստացող բանկին վճարման հանձնարարականում նշված գումարը: Ուղարկողը պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականում նշված գումարն ստացող բանկին, եթե «միջոցների փոխանցումը չի ավարտվել շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը՝ դրանում նշված շահառուի օգտին ակցեպտավորելով»:

Այն դեպքերում, երբ ուղարկողը պարտավոր չէր վճարել վճարման հանձնարարականում նշված գումարը, սակայն ստացող բանկը դեբետագրել է նրա հաշիվը, ստացող բանկը պարտավոր է վերադարձնել ուղարկողին այդ գումարը: «Ստացող բանկը պարտավոր է նաև այդ գումարի դիմաց տոկոսներ վճարել՝ հաշվարկված այդ գումարն» ուղարկողի հաշվից դեբետագրման (կամ այլ ձևով ուղարկողի կողմից այն վճարման) պահից, «բացառությամբ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 10 և 22 հոդվածներով նախատեսված դեպքերի» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 3):

Օրինակ 3. Ուղարկողը 25.09.1999 թ. A բանկին վճարման հանձնարարական է ուղարկել՝ հանձնարարելով իր հերթին հանձնարարել B բանկին՝ 29.09.1999 թ. վճարել շահառուին 1.000.000 դրամ գումար: A բանկը 25.09.1999 թ. դեբետագրում է ուղարկողի հաշիվը 1.000.000 դրամ գումարի չափով, սակայն 29.09.1999 թ. ուղարկողը պարզել է, որ գումարը չի ակցեպտավորվել շահառուի բանկի կողմից իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականում նշված շահառուի օգտին և այդ մասին տեղեկացնում է A բանկին «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 10 և 22 հոդվածներով սահմանված ժամկետներում: Այս դեպքում ուղարկողը պարտավոր չէր վճարել ստացող բանկին, և ստացող բանկը պարտավոր է ուղարկողին վերադարձնել 1.000.000 դրամ գումարը և այդ գումարի դիմաց «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի համաձայն հաշվարկվող տոկոսները՝ հաշվարկված 25.09.1999 թ.-ից սկսած մինչև 1.000.000 դրամ գումարի ամբողջությամբ վերադարձման օրը: Սա, փաստորեն, միջոցների վերադարձման երաշխիք է, որը շատ կարևոր է ուղարկողին պաշտպանելու համար: Ուղարկողը երաշխավորվում է, որ նա չի կրի վնաս այն դեպքերում, երբ միջոցների փոխանցման ժամանակ սխալ է տեղի ունեցել:

Այն դեպքերում, երբ միջոցների փոխանցումը չի ավարտվել շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականում նշված շահառուի օգտին վճարման հանձնարարականի ակցեպտավորմամբ, և միջնորդ բանկը պարտավոր է վերադարձնել վճարման հանձնարարականում նշված գումարը իրեն ներկայացնող ուղարկողին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 3), սակայն չի կատարում այն «Վճարման հանձնարարականով

միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի կետ 3-ով նախատեսված դեպքերից որևէ մեկի կամ այլ օրենքի հիման վրա, ապա այն ուղարկողը, որն ի կատարումն իրեն ներկայացված վճարման հանձնարարականի պայմանների՝ իր հերթին վճարման հանձնարարական է ուղարկել տվյալ միջնորդ բանկի միջոցով, «իրավունք ունի պահանջել վճարման հանձնարարականի գումարը» իրեն վճարման հանձնարարական ուղարկողից: Այս դեպքում տվյալ միջնորդ բանկից վճարման հանձնարարականում նշված գումարը հետ պահանջելու իրավունքն անցնում է «տվյալ միջնորդ բանկի միջոցով փոխանցումը նախատեսող առաջին վճարման հանձնարարականն ուղարկողին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 4):

Օրինակ 4. Վճարողը վճարման հանձնարարական է տալիս A բանկին՝ հանձնարարելով 1.000.000 դրամ գումար ուղարկել B միջնորդ բանկի միջոցով C բանկի հաճախորդ հանդիսացող շահառուին՝ վճարման օր նշելով 29.09.1999 թ.: A բանկը ճիշտ ժամկետներում դեբետագրում է վճարողի հաշիվը և վճարման հանձնարարական է ուղարկում B միջնորդ բանկին՝ ի կատարումն վճարողի կողմից տրված վճարման հանձնարարականի: Վճարողը 01.10.1999 թ. պարզում է, որ, այնուամենայնիվ, C բանկի կողմից գումարը չի ակցեպտավորվել իր կողմից վճարման հանձնարարականում նշված շահառուի հաշվին: Պարզաբանումների արդյունքում պարզվում է, որ B միջնորդ բանկը, ստանալով A բանկից վճարման հանձնարարականը, հրաժարվել է վճարում կատարելուց և այդ մասին տեղեկացրել է A բանկին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, կետ 3, ենթակետ գ): Այս դեպքում վճարողը պարտավոր էր վճարման հանձնարարականի գումարը վճարել A բանկին, քանի որ նա բարեխղճորեն կատարել է վճարողի կողմից իրեն ներկայացված հանձնարարականը: B միջնորդ բանկից վճարման հանձնարարականի գումարը հետ պահանջելու իրավունքն այստեղ անցնում է վճարողին՝ որպես տվյալ միջնորդ բանկի միջոցով փոխանցումը նախատեսող առաջին վճարման հանձնարարականն ուղարկողի:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածով սահմանված վճարման պարտավորությունից ազատվելու և վճարում ստանալու իրավունքները «չեն կարող փոփոխվել պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 5):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածով սահմանված բոլոր դրույթները գործում են այնքանով, որքանով «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 11 և 13 հոդվածներով այլ բան սահմանված չէ:

Ուղարկողի վճարումը ստացող բանկին

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ով սահմանված ուղարկողի ստանձնած՝ ստացող բանկին վճարելու պարտավորությունը կատարված է համարվում հետևյալ դեպքերում.

1. Եթե ուղարկողը բանկ է, և հաշվարկն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի միջոցով, ապա պարտավորությունը կատարված է համարվում այն պահից, երբ ստացող բանկն ստանում է ՀՀ կենտրոնական բանկից անմիջականորեն կամ միջոցների փոխանցումների համակարգի միջոցով քաղվածք՝ պարտավորության

վերջնահաշվարկի կատարման մասին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 2):

2. Եթե ուղարկողը բանկ է, և հաշվարկն իրականացվում է բանկերի փոխադարձ թղթակցային հաշիվների միջոցով կամ ՀՀ կենտրոնական բանկից տարբեր հաշվարկային բանկի միջոցով՝ ա) այն դեպքում, երբ ուղարկողը կրեդիտագրում է ստացող բանկի՝ իր մոտ գտնվող «լորո» հաշիվը կամ հաշվարկային բանկում վարվող ստացող բանկի հաշիվը, այն պահից, երբ ստացող բանկը դուրս է գրում իր հաշվին կրեդիտագրված գումարը, կամ եթե գումարը դուրս չի գրվում, այն «օրացուցային օրվա ավարտին, որի ընթացքում կրեդիտագրված գումարը կարող էր դուրս գրվել, և ստացող բանկը տեղյակ էր այդ մասին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 3), բ) այն դեպքում, երբ ստացող բանկը դեբետագրում է ուղարկողի իր մոտ վարվող «լորո» հաշիվը՝ այն պահից, երբ հաշիվը դեբետագրվում է և «այն ծավալով, որով հաշվի մնացորդը բավարար է ստացող բանկի պահանջը բավարարելու համար» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 4):
3. Եթե ուղարկողը և ստացող բանկը «փոխադարձ պարտավորությունների հաշվակցում նախատեսող միջոցների փոխանցումների համակարգի անդամներ են», օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկի քլիրինգային վճարումների համակարգի, ապա, «փոխադարձ պարտավորությունների հաշվակցման պայմանագրի առկայության դեպքում», այն պահից, երբ ստացող բանկը ստանում է «համակարգի կանոններով սահմանված կարգով պարտավորությունների վերջնահաշվարկը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 5)՝ «հաշվակցված պարտավորությունների ծավալով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 6):
4. Մնացած դեպքերում ուղարկողի ստացող բանկին վճարելու պարտավորության կատարման պահը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 26, կետ 7):

Շահառուին վճարելու և տեղեկացնելու շահառուի բանկի պարտավորությունը

Բացառությամբ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի և հոդված 28-ի կետ 4-ով նախատեսված դեպքերի, երբ շահառուի բանկն ակցեպտավորում է ստացված վճարման հանձնարարականը, նա պարտավոր է գումարը վճարել շահառուին՝ ա) վճարման հանձնարարականում վճարման օր նշված լինելու դեպքում՝ վճարման օրը, բ) վճարման օր նշված չլինելու դեպքում՝ իր կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորման օրը: Երբեմն ստացող բանկը վճարման հանձնարարականն ստանում է իր գործառնական օրվա ավարտից հետո (օրինակ՝ S.W.I.F.T. համակարգի միջոցով), այդ դեպքերում հանձնարարականն ստացված է համարվում հաջորդ գործառնական օրվա սկզբին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 7, կետ 2) և բանկը, ակցեպտավորելով այն, պարտավոր է վճարման հանձնարարականի գումարը վճարել շահառուին վճարման օրվան «հաջորդող գործառնական օրվա ընթացքում»:

Բոլոր այն դեպքերում, երբ շահառուի բանկը, ստանալով վճարման հանձնարարականը և ակցեպտավորելով այն, այնուամենայնիվ, չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում շահառուի նկատմամբ իր ստանձնած վճարման

պարտավորությունը, նա պարտավոր է «հատուցել շահառուի կրած բոլոր այն վնասները, որոնք հետևանք են եղել» վճարման պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, եթե չապացուցի, որ վճարման պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է «շահառուի՝ տվյալ վճարումն ստանալու իրավունքի վերաբերյալ իր ունեցած հիմնավոր կասկածի» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 1):

Վճարման հանձնարարականով կարող է հանձնարարվել շահառուի բանկին՝ վճարումը շահառուին կատարելու երկու հնարավոր եղանակներով՝ ա) շահառուի բանկում վարվող շահառուի հաշվին գումարի կրեդիտագրմամբ և բ) գումարը կանխիկ ձևով շահառուին տրամադրմամբ: Առաջին դեպքում շահառուի բանկը, ակցեպտավորելով ստացված վճարման հանձնարարականը և կրեդիտագրելով վճարման հանձնարարականում նշված գումարը շահառուի հաշվին, պարտավոր է ոչ ուշ, քան վճարման օրվան (վճարման օր չնշված լինելու դեպքում՝ ակցեպտավորման օրվան) հաջորդող օրացուցային օրվա սկզբին բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (շահառուի բանկի և շահառուի միջև փոխադարձ համաձայնեցված եղանակով) տեղեկացնել շահառուին գումարի ստացման մասին: Երկրորդ դեպքում շահառուի բանկը նույնպես պարտավոր կլինի տեղեկացնել շահառուին գումարի ստացման մասին միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է վճարման հանձնարարականով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2): Շահառուի բանկի կողմից շահառուին գումարի ստացման մասին տեղեկացման պահանջը չկատարելու կամ ուշացմամբ կատարելու դեպքում շահառուի բանկը պարտավոր է «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ով սահմանված չափով տոկոսներ վճարել շահառուին «վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկզբից մինչև շահառուին տեղեկացնելու օրը ներառյալ»: «Շահառուի բանկը պատասխանատվություն չի կրում շահառուի կրած վնասների համար», որոնք շահառուի բանկի կողմից շահառուին ստացված գումարի մասին չտեղեկացման կամ ուշացմամբ տեղեկացման հետևանք են եղել, բացառությամբ այն դեպքերի, երբ վիճարկվում է դատական կարգով սույն հոդվածով նախատեսված տոկոսների վճարումը: Այդ ժամանակ շահառուի բանկը պարտավոր է փոխհատուցել շահառուին դրա հետ կապված «պետական տուրքի և իրավաբանական ծառայության վճարները»:

Շահառուն կարող է տեղեկանալ իր օգտին ստացված գումարների մասին՝ անմիջականորեն ներկայանալով շահառուի բանկ, հեռախոսի կամ այլ հեռահաղորդակցման միջոցներով (հեռատիպ, ֆաքս, տելեքս, CBANet միջբանկային համակարգչային ցանց), «փոստով՝ պատվիրված կամ հուսալի այլ նամակով», կամ էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով՝ տեղեկացում (տեղեկանք հաշվի մնացորդի վերաբերյալ) կամ հաշվից քաղվածք ստանալով: Շահառուն համարվում է տեղեկացված՝ ա) բանավոր տեղեկացման դեպքում՝ տեղեկացման պահից, բ) գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացման դեպքում՝ համապատասխան տեղեկացումը (տեղեկանքը հաշվի մնացորդի վերաբերյալ) կամ հաշվից քաղվածքը շահառուի բանկի կողմից ուղարկվելու պահից: Շահառուի բանկը պարտավոր է շահառուին տեղեկացում ուղարկելու նպատակով այնպիսի «միջոց ընտրել և եղանակ կիրառել, որոնք կապահովեն շահառուի կողմից տեղեկացման ստանալը»:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 1 կետով սահմանված «վճարում և վնասների հատուցում ստանալու շահառուի» իրավունքը չի կարող փոփոխվել, իսկ նույն հոդվածի 2 և 3 կետերով սահմանված տեղեկացում և տոկոսներ ստանալու իրավունքները կարող են փոփոխվել

պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով միայն այն դեպքում, երբ շահառուն տեղեկացվել է այդ մասին նախապես՝ մինչև միջոցների փոխանցման սկիզբը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 4):

Շահառուի բանկի վճարումը շահառուին

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածով սահմանվում է, թե երբ է համարվում կատարված շահառուի բանկի շահառուին վճարելու պարտավորությունը: Եթե շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականով նախատեսվում է վճարումը շահառուին իրականացնել շահառուի հաշվին գումարը կրեդիտագրելով, և շահառուի բանկը կրեդիտագրում է շահառուի հաշիվը, ապա շահառուի բանկի շահառուին վճարելու պարտավորությունը կատարված է համարվում երբ և որ չափով.

1. շահառուի բանկը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի կետ 2-ով սահմանված կարգով շահառուին տեղեկացնում է իր օգտին ստացված գումարի (հաշվին գումարը կրեդիտագրելու) և այն դուրս գրելու իրավունքի մասին («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 1, ենթակետ ա), կամ
2. շահառուի բանկը շահառուի օգտին ստացված գումարն ուղղում է շահառուի առկա պարտավորությունների կատարմանը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի համաձայն («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 1, ենթակետ բ), կամ
3. վճարման հանձնարարականում նշված գումարը տրամադրվում է շահառուի տնօրինմանը կանխիկով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 1, ենթակետ գ):

Այն դեպքում, երբ շահառուի բանկը կրեդիտագրում է շահառուի հաշիվը, սակայն չի իրականացնում վերը նշված 3 կետերից որևէ մեկը, ապա շահառուի բանկի՝ շահառուին վճարելու պարտավորության կատարման պահը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 2):

Կիրառվող միջոցների փոխանցումների համակարգերի կանոններով կարող են նախատեսվել շահառուին պայմանական վճարումների կատարման մեխանիզմներ, երբ շահառուի բանկը մինչև ուղարկողից ակցեպտավորված վճարման հանձնարարականում նշված գումարն ստանալը վճարում է շահառուին այն պայմանով, որ եթե շահառուի բանկը, այնուամենայնիվ, չստանա այդ գումարը ուղարկողից, շահառուն պարտավոր է այն վերադարձնել շահառուի բանկին: Այդպիսի դեպքերում (պայմանական վճարում ստանալու դեպքում) շահառուն պարտավոր է շահառուի բանկին վերադարձնել ստացված գումարը, եթե.

1. վճարողը և շահառուն նախապես, մինչև տվյալ միջոցների փոխանցումն սկսելը տեղեկացվել են իրենց սպասարկող բանկերի կողմից, որ վճարումը լինելու է պայմանական («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 4, ենթակետ ա), և
2. «վճարողի բանկը, շահառուի բանկը և շահառուն համաձայնել են կիրառել պայմանական վճարումներ նախատեսող կանոններ» («Վճարման

հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 4, ենթակետ բ), և

3. շահառուի բանկը տվյալ՝ իր կողմից ակցեպտավորված, վճարման հանձնարարականում նշված գումարը չի ստացել ուղարկողից («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 4, ենթակետ գ):

Մնացած դեպքերում շահառուի բանկը չի կարող հետ պահանջել շահառուից իրեն վճարված գումարը և շահառուի բանկի ու շահառուի միջև «կնքված պայմանագրի այն դրույթը, որի համաձայն շահառուի բանկն իրավունք ունի շահառուից պահանջել վերջինիս վճարված վճարման հանձնարարականի գումարը, եթե շահառուի բանկն այն չի ստացել ուղարկողից»՝ անվավեր է («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 3):

Այն դեպքերում, երբ կիրառվում է պայմանական վճարումների մեխանիզմը, և շահառուն պարտավոր է ու վերադարձնում է շահառուի բանկին իրեն պայմանական վճարված գումարը, շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումն «ուժը կորցնում է», և վճարողի կողմից վճարումը շահառուին համարվում է չկատարված («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 4):

Վճարողի վճարումը շահառուին: Հիմնական պարտավորության կատարումը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածով սահմանվում է, թե երբ է կատարված համարվում վճարողի՝ շահառուին վճարելու հիմնական պարտավորությունը: Վճարողի կողմից վճարումը շահառուին կատարված է համարվում շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորման պահին ակցեպտավորված գումարի չափով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 1):

Օրինակ 1. Եթե վճարողը նախաձեռնել է վճարում 1.000.000 դրամի չափով՝ միևնույն ժամանակ հանձնարարելով վճարումն իրականացնել 19.09.1999 թ., և շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականն ակցեպտավորվել է հօգուտ վճարողի կողմից վճարման հանձնարարականում նշված շահառուի՝ 20.09.1999 թ. 900.000 դրամ գումարի չափով, ապա վճարողի վճարումը շահառուին կատարված է համարվում 20.09.1999 թ. 900.000 դրամի չափով: Բացառություն են կազմում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածով և 28 հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերը:

Վճարողի շահառուի նկատմամբ ստանձնած վճարման հիմնական պարտավորությունը կատարված է համարվում, եթե վճարումն իրականացված է վճարողի և շահառուի միջև կնքված պայմանագրով (որի համաձայն առաջացել է վճարողի շահառուին վճարելու հիմնական պարտավորությունը) սահմանված չափով, ժամկետին, ձևով կամ միջոցով, հակառակ դեպքում՝ շահառուն կարող է վնասներ կրել: Օրինակ՝ շահառուն վճարողի հետ կնքվող պայմանագրում կարող է նախատեսել, որ իրեն հասանելիք գումարը փոխանցվի էլեկտրոնային վճարումների համակարգով, որպեսզի երրորդ անձի նկատմամբ իր կողմից ստանձնված պարտավորությունը ժամանակին կատարվի: Այս պահանջը խախտելու դեպքում շահառուն վնասներ կարող է կրել: Այդ իսկ պատճառով այն դեպքերում, երբ վճարումը կատարված է «հիմնական

պարտավորությունն առաջացնող պայմանագրին հակասող ձևով կամ միջոցով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 2, ենթակետ ա) և «շահառուն շահառուի բանկից վճարման հանձնարարականն ստանալու մասին տեղեկացումն ստանալուց հետո անմիջապես տեղեկացնում է վճարողին վճարումն ընդունելուց հրաժարվելու մասին» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 2, ենթակետ բ), և ստացված գումարը «շահառուն իր հաշվից դուրս չի գրել կամ այն չի ուղղվել շահառուի այլ պարտավորությունների մարմանը» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 2, ենթակետ գ) և վճարողի կողմից վճարման հիմնական պարտավորությունը ժամանակին չկատարելու հետևանքով շահառուն վնաս կկրի («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 2, ենթակետ դ), վճարողի վճարման հիմնական պարտավորությունը կատարված չի համարվում, և շահառուի բանկից վճարումն ստանալու շահառուի նախատեսված իրավունքն անցնում է վճարողին: Սնացած դեպքերում վճարման հիմնական պարտավորությունը կատարված է համարվում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի կետ 1-ով սահմանված չափով:

Վճարման հանձնարարականների կատարման ժամանակ միջոցների փոխանցման մասնակից հանդիսացող ստացող բանկերն իրենց կողմից կատարվող աշխատանքի (մատուցվող ծառայության) դիմաց հատուցումը, որպես կանոն, ստանում են իրենց և հաճախորդների միջև սահմանված (կնքված պայմանագրով) չափերով, ձևով և ժամկետներում: Դա կարող է կատարվել հաճախորդի կողմից տրված առանձին հանձնարարականով, բանկի կողմից հաճախորդի հաշվից հատուցման չափով մեծամասամբ գումարի՝ ուղղակի դեբետագրման միջոցով կամ, որոշ դեպքերում, պարտադիր հաճախորդի համաձայնության դեպքում՝ վճարման հանձնարարականում նշված գումարը համապատասխան չափով նվազեցնելով, ինչը նշանակում է, որ ստացող բանկը, ի կատարումն ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականի, իր հերթին վճարման հանձնարարական է ուղարկում՝ սակայն ավելի փոքր գումարի, միջոցների փոխանցման շղթայի մասնակից հանդիսացող հաջորդ օղակին: Այն դեպքերում, երբ միջոցների փոխանցման մասնակից հանդիսացող «ստացող մեկ կամ ավելի բանկերի կողմից մատուցված ծառայությունների դիմաց» հատուցումն ստացվում է վճարման հանձնարարականի գումարի նվազեցման միջոցով, վճարողը, հաշվի առնելով այդ հանգամանքը, պետք է իր ստանձնած վճարման պարտավորությունն ամբողջովին կատարելու նպատակով նախաձեռներ համապատասխան չափով ավելի մեծ գումարի վճարում, որպեսզի շահառուն ստանա իրեն հասանելիք գումարն ամբողջությամբ: Հակառակ դեպքում շահառուն կարող է պահանջ ներկայացնել վճարողին՝ վճարելու պակասեցված գումարը և այն դեպքում, երբ վճարողը հրաժարվի այդ պահանջը կատարելուց, վճարողի վճարման հիմնական պարտավորությունը կատարված է համարվում միայն շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարի չափով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 3):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածով սահմանված վճարողի և շահառուի իրավունքներն ու պարտականությունները «կարող են փոփոխվել միայն նրանց միջև կնքված պայմանագրով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 29, կետ 4):

Միջոցների փոխանցման համակարգի կանոնները և պայմանագրերը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածը մշակվել է օրենքին որոշակի ճկունություն տալու նպատակով: Միջոցների փոխանցման համակարգի կանոնները, որպես կանոն, կարգավորում են համակարգի մասնակից բանկերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Դրանք կարող են ներառել բավականին լայն շրջանակի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, վճարման հանձնարարականների ձևերը և դրանցում պարունակվող վավերապայմանները, անվտանգության արարողակարգը, հանձնարարականները չեղյալ համարելու իրավունքներն ու դրա արարողակարգը, բանկերի փոխհատուցում ստանալու իրավունքները, միջոցների փոխանցման ավարտի ճգճգման դիմաց փոխհատուցում ստանալու հարցերը, հաշվարկների իրականացման ժամկետները և ձևերը, առաջացող հնարավոր ռիսկերի բաշխման մեխանիզմները և այլն: Միջոցների փոխանցումների համակարգերի կանոնները, այն չափով, որքանով չեն հակասում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին, կարող են բավականին արդյունավետ լրացնել դրանց: Չնայած միջոցների փոխանցումների կանոնները ուղղակիորեն ազդում են միայն այդ համակարգերի մասնակիցների վրա՝ դրանք անուղղակի ձևով ազդեցություն են թողնում և համակարգի ոչ մասնակիցների՝ նախաձեռնողի, շահառուի իրավունքների վրա:

Բոլոր այն դեպքերում, երբ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով չի արգելվում որևէ փոփոխություն կատարել, «միջոցների փոխանցման մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները կարող են փոփոխվել նրանց միջև կնքված պայմանագրով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 1) կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 3):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածում սահմանվում է նաև «միջոցների փոխանցումների համակարգի կանոնները» հասկացությունը: Դրանք այն կանոններն են, որոնք.

1. սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից և կարգավորում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստեղծված էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով փոխանցումներ իրականացնող բանկերի իրավունքներն ու պարտականությունները կամ
2. սահմանվում են բանկերի կողմից և կարգավորում են բանկերի կողմից ստեղծված միջոցների փոխանցման համակարգերի (օրինակ՝ բանկերի կողմից ստեղծված և ՀՀ կենտրոնական բանկից դուրս գործող քլիրինգային համակարգեր) միջոցով փոխանցումներ իրականացնող կողմերի իրավունքներն ու պարտականությունները («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 30, կետ 2):

Շահառուի բանկի հաշվակցելու իրավունքը

Կարող են լինել դեպքեր, երբ վճարման հանձնարարականը, որի համաձայն շահառուի հաշիվը տվյալ բանկում ենթակա է կրեդիտագրման, շահառուի բանկի կողմից ստանալու պահին շահառուն ունի պարտավորություն շահառուի բանկի նկատմամբ: Այդ դեպքերում վճարման հանձնարարականի գումարը շահառուի հաշվին կրեդիտագրելուց հետո շահառուի բանկը կարող է «օրենքով սահմանված կարգով միակողմանիորեն

հաշվակցել ստացված վճարման հանձնարարականի գումարն իր նկատմամբ ունեցած պարտավորության հետ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, կետ 1):

Շահառուն կարող է գումարն իր հաշվին կրեդիտագրելու պահին ունենալ նաև այլ պարտավորություններ, որոնք ՀՀ օրենսդրությամբ «ենթակա են բավարարման անվիճելիության կարգով»: Այդ դեպքերում, «եթե շահառուի բանկը տեղեկացել է կամ պարտավոր էր տեղեկանալ նման պահանջի առկայության մասին», նա պարտավոր է շահառուի հաշվին կրեդիտագրված գումարն ուղղել այդ պահանջների բավարարմանը: Այդ պահանջները բավարարվում են ՀՀ օրենքով սահմանված հերթականությամբ («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, կետ 2):

Ստացող բանկին ներկայացված կալանքի կամ արգելանքի մասին որոշումները: Միջոցների փոխանցումն արգելող դատարանի որոշումները

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դատարանը կարող է միայն չորս տեսակի արգելքներ դնել միջոցների փոխանցման կամ հաշվի մնացորդի տնօրինման վրա.

- վճարողին արգելել վճարման հանձնարարականներ ուղարկել.
- վճարողի բանկին արգելել վճարողի վճարման հանձնարարականներն ակցեպտավորել.
- շահառուի բանկին արգելել ակցեպտավորված վճարման հանձնարարականի միջոցները շահառուի տնօրինմանը հանձնել կամ
- շահառուին արգելել շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարն իր հաշվից դուրս գրել («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 32, կետ 1):

Այն դեպքում, երբ ուղարկողի՝ ստացող բանկում գտնվող հաշվի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կալանք կամ արգելանք պետք է դրվի, դրա իրականացման համար հանձնարարականը (դատարանի որոշումը) ստացող բանկին անհրաժեշտ է ուղարկել այնպիսի ժամկետում և եղանակով, որ ստացող բանկը մինչև վճարման հանձնարարականի ակցեպտավորումը «այն մերժելու կամ անհրաժեշտ գործողություններ կատարելու» համար հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում, եթե ստացող բանկն ակցեպտավորել է ուղարկողի կողմից տրված վճարման հանձնարարականը, նա իրավունք ունի առաջնահերթության կարգով գանձել ուղարկողի հաշվից վճարման հանձնարարականի գումարը («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 32, կետ 2):

Վճարողը նույնպես կարող է արգելանք կամ կալանք դնել շահառուին փոխանցվող միջոցների վրա, սակայն արգելանքը կամ կալանքը կարող է դնել միայն շահառուի բանկում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 32, կետ 3):

Հաշիվը: Հաշվի մնացորդը: Վճարման հանձնարարականների կատարման հերթականությունը

Որպես կանոն՝ հաճախորդը բանկում կարող է ունենալ ցանկացած տիպի և քանակությամբ հաշիվներ: Սակայն միջոցների փոխանցումներ կատարելիս բանկը պարտավոր է միջոցների դեբետագրումը կատարել հաճախորդի այն հաշվից, որը նա նշել

է վճարման հանձնարարականում կամ տվել է «առանձին հրահանգով»: Եթե հաճախորդի կողմից տրված չէ այդպիսի հրահանգ, և վճարման հանձնարարականում նշված չէ որևէ հաշիվ, ապա բանկը կարող է գումարը դեբետագրել հաճախորդի՝ իր մոտ վարվող «ցանկացած հաշվից, բացառությամբ այն հաշիվների, որոնցից վճարման հանձնարարականի գումարի գանձումը հակասում է այդ հաշվի սպասարկման պայմանագրին կամ տվյալ հաշվի մնացորդի տնօրինման այլ սահմանափակումներին» (օրինակ՝ ժամկետային ավանդային հաշիվներ) («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 33, կետ 1):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով սահմանված է նաև օրենքում կիրառվող «հաշվի մնացորդ» հասկացությունը: «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի իմաստով «հաշվի մնացորդը» հոդված 33-ի կետ 1-ի համաձայն հաշվում «առկա այն միջոցներն են (ցպահանջ կամ ժամկետային), որոնք հաշվետերը (հաճախորդը) կամ նրա կողմից լիազորված անձը կարող է հաշվից դուրս գրել կամ այլ կերպ տնօրինել առանց լրացուցիչ սահմանափակումների» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 33, կետ 2): Հաշվին առկա միջոցների օգտագործման վրա սահմանափակումներ կարող են դրվել հաշվի սպասարկման պայմանագրով (օրինակ՝ պայմանագրով կարող է արգելվել օգտագործել որպես ժամկետային ավանդ ներդրված միջոցները), դատարանի որոշմամբ կամ համակարգի կանոններով (օրինակ՝ օգտագործման արգելք կարող է դրվել համակարգի կողմից գրավադրված պետական պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցների վրա մինչև ստանձնած պարտավորությունների կատարումը): Եթե հաշվի սպասարկման պայմանագրով այլ բան նախատեսված չէ, հաշվի ժամկետայնությունը սահմանափակում չի համարվում:

Ուղարկողը կարող է բանկին ներկայացնել «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ի կետ 1-ի համաձայն սահմանված հաշվից տվյալ օրը կատարման/վճարման ենթակա մեկից ավելի վճարման հանձնարարականներ: Սակայն կարող են լինել դեպքեր, երբ տվյալ պահին հաշվի մնացորդը բավարար չէ բոլոր հանձնարարականները կատարելու համար: Այդ դեպքերում «բանկը կարող է վճարման հանձնարարականները կատարելու կապակցությամբ ուղարկողի հաշիվը դեբետագրել ցանկացած հերթականությամբ» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 33, կետ 3):

Հաշվետերն իր հաշվին կրեդիտագրված միջոցները կարող է դուրս գրել հաշվից (ստանալ կանխիկով) կամ դրանք ուղղել իր ստանձնած պարտավորությունների կատարմանը: Ցանկացած դեպքում «հաշվին առաջինը կրեդիտագրված միջոցները համարվում են հաշվից առաջինը դուրս գրված կամ պարտավորությունների կատարմանն ուղղված» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 33, կետ 4): Այստեղ գործում է FIFO մեխանիզմը՝ առաջինը մուտքագրվածը առաջինն է ելքագրվում:

Տոկոսների չափը և դրանց հաշվարկման կարգը

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածով սահմանվում է տոկոսների այն չափը, որն ստացող բանկը պարտավոր է վճարել ուղարկողին իր կողմից տրված հանձնարարականը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների

մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 1, հոդված 16, կետ 2, հոդված 23, կետ 1, հոդված 25, կետ 3, հոդված 27, կետ 3): «Վճարման ենթակա տոկոսների չափը որոշվում է ուղարկողի և ստացող բանկի միջև կնքված պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 34, կետ 1): Եթե պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով նման բան նախատեսված չէ, ապա տոկոսի չափը որոշելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ երկու հաշվարկը.

1. չվճարված գումարը բազմապատկել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքով, որից հետո արդյունքը բաժանել 360-ի.
2. չվճարված գումարը բազմապատկել ստացող բանկի կողմից ժամկետային ավանդների դիմաց առաջարկված միջին տոկոսով, որից հետո արդյունքը բաժանել 360-ի, ապա ընտրել հաշվարկված մեծություններից առավել մեծը: Այս մեծությունը կիրառվում է յուրաքանչյուր ուշացված օրվա դիմաց:

Օրինակ 1. A բանկը վեց օրով ուշացրել է ուղարկողի կողմից իրեն հանձնարարված 1.000.000 դրամի վճարումը՝ սեպտեմբերի 9-ի փոխարեն վճարումը իրականացրել է սեպտեմբերի 15-ին, որի դիմաց պետք է վճարի համապատասխան տոկոսներ (վեց օրվա դիմաց՝ սեպտեմբերի 10, 11, 12, 13, 14 և 15): ՀՀ կենտրոնական բանկի կողմից օգոստոսի 31-ին սահմանվել է տարեկան 52% վերաֆինանսավորման տոկոսադրույք, իսկ սեպտեմբերի 14-ին՝ 50%: A բանկի կողմից առաջարկված է ժամկետային ավանդների դիմաց 24% միջին տոկոս: Վճարվելիք տոկոսի չափը որոշելու համար հաշվարկվում են.


1. սեպտեմբերի 10-ի, 11-ի, 12-ի և 13-ի համար օրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը հավասար է 0,52 / 360 = 0,00144 (ընդ որում, ոչ աշխատանքային օրերի՝ սեպտեմբերի 11-ի և 12-ի համար այն հավասար է դրանց նախորդող աշխատանքային օրվա համար սահմանվածին), իսկ սեպտեմբերի 14-ի և 15-ի համար՝ 0,5 / 360 = 0,00139-ի: Գումարը հավասար է 1000000 * 4 * 0,00144 + 1000000 * 2 * 0,00139 = 8540 դրամի,
2. երկրորդ հաշվարկի դեպքում տոկոսի չափը հավասար է 1000000 * 6 * 0,24 / 360 = 4000 դրամի, վերոհիշյալ երկու հաշվարկված մեծություններից ընտրվում է առավել մեծը՝ 8540 դրամը:

Հայաստանի Հանրապետության բանկերի և օտարերկրյա բանկերի միջև միջոցների փոխանցումների իրավական կարգավորումը

Միջոցների փոխանցումները կարող են իրականացվել ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքի ներսում ամբողջությամբ՝ միջոցների փոխանցման նախաձեռնումից սկսած մինչև դրա ավարտը ներառյալ, այնպես էլ մասնակի՝ մի մասը Հայաստանի Հանրապետության տարածքում, մյուսը՝ հանրապետության տարածքից դուրս: Այն դեպքերում, երբ միջոցների փոխանցման մի մասը կարգավորվում է «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով, իսկ մյուսը՝ այլ երկրի օրենքներով, բավականին դժվար է պարզել միջոցների փոխանցման մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաև գուշակել միջոցների փոխանցման արդյունքը, եթե դրա իրականացման ժամանակ սխալ է թույլ տրվել: Այս խնդրին է անդրադառնում «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածը: Միջոցների փոխանցման


մասնակիցները կարող են պայմանագրով (փոխադարձ համաձայնությամբ) սահմանել որևէ երկրի (այդ թվում՝ երրորդ երկրի, եթե կողմերի երկրների օրենսդրությունը միջոցների փոխանցումների մասով հստակ չէ) օրենսդրությունն իրենց միջև միջոցների փոխանցումների կարգավորման նպատակով: Եթե պայմանագրով նախատեսված չէ այդպիսի կետ, ապա «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ մասնակիցների միջև միջոցների փոխանցումները կարգավորվում են ստացող բանկի գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 35, կետ 1):

Օրինակ 1. Միջոցների փոխանցման նախաձեռնողը, որը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է, վճարման հանձնարարական է ուղարկում B բանկին, որն այլ երկրի ռեզիդենտ բանկ է: Տվյալ օրինակում կարևոր չէ, թե B բանկը վճարողի բանկն է, միջնորդ բանկ, թե շահառուի բանկ:



Եթե միջոցների փոխանցման նախաձեռնողի և B բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված է, որ իրենց միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության, B բանկի երկրի կամ այլ երկրի օրենսդրությամբ, ապա յուրաքանչյուր հարցի ծագման դեպքում կողմերը պետք է ղեկավարվեն նշված պետության օրենսդրությամբ: Եթե այդպիսի բան սահմանված չէ պայմանագրով, ապա տվյալ օրինակում միջոցների փոխանցումը կարգավորվում է ստացող բանկի երկրի՝ տվյալ դեպքում B բանկի երկրի օրենսդրությամբ:


Օրինակ 2. A բանկը, որը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բանկն է, միջոցներ է փոխանցում B բանկին, որն այլ երկրի ռեզիդենտ բանկն է: Տվյալ օրինակում կարևոր չէ՝ B բանկը միջնորդ բանկ է, թե շահառուի բանկ:



Եթե A և B բանկերի միջև կնքված պայմանագրով սահմանված է, որ իրենց միջև միջոցների փոխանցումները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության, B բանկի երկրի կամ այլ երկրի օրենսդրությամբ, ապա յուրաքանչյուր հարցի ծագման դեպքում կողմերը պետք է ղեկավարվեն նշված պետության օրենսդրությամբ: Եթե այդպիսի բան սահմանված չէ պայմանագրով, ապա տվյալ օրինակում միջոցների փոխանցումը կարգավորվում է (ինչպես առաջին օրինակում) ստացող բանկի երկրի՝ տվյալ դեպքում B բանկի երկրի օրենսդրությամբ:

Շահառուն և շահառուի բանկը նույնպես կարող են պայմանագրով (փոխադարձ համաձայնությամբ) սահմանել որևէ երկրի (այդ թվում՝ երրորդ երկրի) օրենսդրությունն իրենց միջև միջոցների փոխանցումների ժամանակ փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով: Բացի այդ, իրենց միջև օգտագործվող համակարգի կանոնները կարող են նախատեսել նման կարգավորման պայմաններ: Եթե պայմանագրով կամ համակարգի կանոններով նախատեսված չէ այդպիսի դրույթ, ապա «շահառուի և շահառուի բանկի միջև միջոցների փոխանցումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի բանկի գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան» («Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, հոդված 35, կետ 2):

Օրինակ 3. Շահառուի բանկը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բանկն է, իսկ շահառուն՝ այլ երկրի ռեզիդենտը:



Տվյալ դեպքում, եթե շահառուի բանկի և շահառուի միջև կնքված պայմանագրով կամ իրենց միջև կիրառվող (կիրառման դեպքում) համակարգի կանոններով սահմանված չեն փոխհարաբերությունների կարգավորման համապատասխան դրույթներ, ապա դրանց միջև միջոցների փոխանցումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի բանկի՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վճարման առավելագույն ժամկետներ

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածով սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունը՝ սահմանելու «Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի միջև կատարվող միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետները և այդ ժամկետները խախտելու համար բանկերի պատասխանատվությունը», ինչը սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 1997 թվականի մարտի 25-ի թիվ 99 որոշմամբ: